

1983-ին Թուրքիոյ Մէջ Կախաղան Զանուած ԱՍԱԼԱ-ի Մարտիկ Լեւոն Էքմէքճեանի Աճիւնները Յանձնուած ԵՆ Ընտանիքին



ԱՍԱԼԱ-ի մարտիկներ Զօհրայ Սարգսեան (Ձախիմ) եւ Լեւոն Էքմէքճեան

Յունուար 5-ին, Թուրքիոյ Մարզու իրաւունքներու Միութեան ցեղապաշտութեան եւ խորականութեան դէմ յանձնաժողովը յայտարարեց, որ 33 տարի առաջ Թուրքիոյ մէջ կախաղան հանուած ԱՍԱԼԱ-ի (Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակ) մարտիկ Լեւոն Էքմէքճեանի աճիւնները յանձնուած են Փարիզ բնակող անոր հարազատներուն: Այս մասին կը տեղեկացնէ «Արեւելք» կայքէջը:

Թուրքիոյ Մարզու իրաւունքներու Միութեան ցեղապաշտութեան եւ խորականութեան դէմ յանձնաժողովի անդամ, Պոլսահայ լրագրող Հրան Գասպարեան «Արեւելին» ըսած է որ, հայ յեղափոխական մարտիկի աճիւնը Անգարայի ձէպեճի Ասրի գերեզմանոցէն հանելու եւ իր հարազատներուն յանձնելու հարցին մէջ իրենք եղած են միջնորդ:

Թուրքիոյ մէջ 1983 թուականի Յունուարի 23-ին կախաղան հանուած Լեւոն Էքմէքճեանի աճիւնը ստանալու հարցով, երկու տարի առաջ Թուրքիոյ իշխանութիւններուն դիմած է Էքմէքճեանի փարիզաբնակ եղբայրը՝ Համբարձումը:

ԱՍԱԼԱ-ի Պէլլութիւնայ անդամ Լեւոն Էքմէքճեան 1982-ի Օգոստոսի 7-ին, Զօհրայ Սարգսեանի գլխաւորութեամբ, Թուրքիոյ մէջ իրականացուցած էին ռազմական գործողութիւն մը: Անոնք

զինուած մուտք գործելով Անգարայի «Էսենբողա» միջազգային օդանավակայան, կրակած էին օդանավակայանի սպասման սրահին մէջ, ուր այդ պահուն կը գտնուէին նաեւ թրքական զինուած ուժերու ռազմական ջոկատներ եւ անձնագրային հսկողութեան աշխատակիցներ: Օդանավակայանի ճաշարաններէն մէկուն մէջ Զօհրայ Սարգսեանի պատանդ վերցուցած էր աւելի քան քսան հոգի, որոնցմէ 9 մարդ մահացած էր, իսկ վիրաւորուած՝ 82 հոգի:

«Էրգրում-Կարին» անունը կրող այդ գործողութեան ընթացքում, Լեւոն Էքմէքճեանի ընկերը՝ Զօհրայ Սարգսեան մահացաւ, իսկ Լեւոն Էքմէքճեան, ծանր վիրաւորուելով ձերբակալուեցաւ եւ վեցամսեայ տանջանքներէ յետոյ, թրքական զինուորական դատարանի կողմէ դատապարտուեցաւ մահուան:

«Արեւելք» կ'աւելցնէ, որ ան եղած է վերջին մարդը, որուն կատմամբ Թուրքիոյ մէջ մահապատիժ կիրառուած է: Այդ թուականէն ասդին, Թուրքիոյ մէջ մահապատիժ վճիռ չէ գործադրուած:

Բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեան Լեւոն Էքմէքճեանի յիշատակին նուիրած է «Գիշերային Ռեքվիէմ» բանաստեղծութիւնը, որ աւելի ուշ տպագրուեցաւ «Գարուն» ամսագրի 1987-ի 11-րդ համարին մէջ:

Ռուսական «ՄԻԿ 29»-ի նոր խմբաքանակ Սը Պիտի ժամանէ Հայաստան

2016 տարուայ ընթացքին, Հայաստանի տարածքին գտնուող ռուսական «Էրեբունի» ռազմական կը ժամանեն չորրորդ սերունդի «ՄԻԿ-29» կործանիչներու նոր խմբաքանակ մը եւ մէկ «Մի 8» փոխադրութեան ուղղաթիւ: Այս մասին կը տեղեկացնէ ԹԱՍՍ գործակալութիւնը, յենուելով Ռուսաստանի Պաշտպանութեան Նախարարութեան մամուլի ծառայութեան հաղորդած տեղեկութիւններուն վրայ:

«2016-ի երկրորդ կէսին, Հայաստանի հանրապետութիւնում տեղակայուած «Էրեբունի» ռուսական աւիացիոն կայան է ժամանելու «ՄԻԿ-29» չորրորդ սերունդի բազմանշանակէտ թեթեւ ճակատային կործանիչների նոր խմբաքանակ ու մէկ «Մի 8» տրանսպորտային ուղղաթիւ», - ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Ռուսաստան Ստահոգուած է Լեւոնային Ղարաբաղի Իրավիճակի Սրմամբ

«Ռուսաստան մտահոգուած է Լեւոնային Ղարաբաղի մէջ իրավիճակի սրմամբ եւ հակամարտող կողմերուն կողմէ աշխուժացնել ջանքերը՝ տարածաշրջանէն ներս խաղաղութիւն հաստատելու համար», - «Ինթերֆաքս» լրատուական գործակալութեան ըսած է Ռուսաստանի արտաքին գործոց փոխնախարար Գրիգորի Կարասին:

«Վերջին ամիսներուն մենք ականատեսը դարձանք ռազմական հակամարտութեան ակտիւացման, կիրառուեցաւ ծանր հրետանի, խոշոր տրամաչափի զնդացիներ, հրանոթային կայանքներ, ինչ որ հանգեցուց գոհերու թիւի աճի, անոնց շարքին նաեւ խաղաղ բնակչութեան մօտ: Այսպիսի իրավիճակ չի կրնար չհանհանգստացնել մեզ», - ըսած է Կարասին՝ ընդգծելով. «Հակամարտող կողմերը պէտք է կրկնապատկեն ջանքերը, կայուն խաղաղութեան հասնելու համար»:

Ռուս Դիւանագէտը յայտնած է, որ Ռուսաստան կը հանդիսանայ հակամարտութեան կարգաւորմամբ զբաղուող միջազգային կառույցի՝ ԵԱՀԿ Մինսկի խումբի երեք համանախագահներէն մէկը եւ ակտիւ



Ռուսաստանի արտաքին գործոց փոխնախարար Գրիգորի Կարասին

ջանքեր կը գործադրէ օգնելու համար հակամարտող կողմերուն՝ հասնելու փոխզիջումներու:

«Ինտերֆաքս»-ի այս հարցազրոյցի ընթացքին, Ղարաբաղէն բացի Կարասին անդրադարձած է նաեւ ուքրանական ճգնաժամին, Մերձդնեստրի հարցի կարգաւորման, Մոլդովայի իրավիճակին, ռուս-վրացական յարաբերութիւններու կարգաւորման հեռանկարին ու Կենտրոնական Ասիայի հարցերուն:

Հայկական Ծաղկասայլը Դարձեալ Տողանցեց Փասատինայի Վարդերու Փառատօնին



Հայկական ծաղկասայլը կը տողանցէ Փասատինայի Գոլոթրատօ պողոտային վրայ

Յունուար 1-ին, Փասատինայի Գոլոթրատօ պողոտային վրայ տեղի ունեցաւ վարդերու 127-րդ փառատօնը, որուն ընթացքին տողանցեցին մի քանի տասնեակ ծաղկասայլեր, ինչ նաեւ դպրոցական փողերախումբեր:

Յաջորդական երկրորդ տարին ըլլալով, Հայ-Ամերիկեան Ծաղկասայլի Ընկերակցութիւնը իրաւունք ստացած էր մասնակցելու փառատօնին, որուն ներկայ եղան մօտ մէկ միլիոն ժողովուրդ, մինչ միլիոնաւոր ուրիշներ, Միացեալ Նահանգներու ամբողջ տարածքին, հեռատեսիլով հետեւեցան աւանդական այս տողանցքին:

Հայկական ծաղկասայլի այս տարուայ նշանաբանն էր՝ «Յայտնաբերէ Հայաստանը», նպատակ ունենալով քաջալերել դէպի Հայաստան զբօսաշրջութիւնը:

Ծաղկասայլին վրայ գետեղուած էին Մայր Հայաստանի, Սարդարապատի, Միծեռնակաբերդի, Գառնիի եւ այլ յուշակոթողներու վարդերով զարդարուած կրկնօրինակները:

5.5 երկարութեամբ տողանցքի ընթացքին, ծաղկասայլը կը հնչեցնէր հայկական երաժշտութիւն եւ կարճակէր սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Տարուայ Մարդը Վճարում Է Անկախութեան Գինը

ԿԱՐԻՆԷ ՍԱՐԻԲԵԿԵԱՆ

Այս օրերին շատ են հանդիպում «տարուայ մարդ», «տարուայ դերասան», «տարուայ նախարար», «տարուայ մարդիկ», «լրագրող» ու «քաղաքական գործիչ» արտայայտությունները: Դժուար է որոշել՝ որքանով են կանխակալ այս անուանակարգերի անունները, եւ ընդհանրապէս ի՞նչ չափանիշներով կարելի է որոշել տարուայ իրական հերոսին:

Յետադարձ հայեացք նետելով անցնող բարդ ու վայրկիւք րոմաներով լի տարուայ ընթացքին, տեղի ունեցած իրադարձութիւններին՝ վստահաբար արձանագրում ենք, որ «Հայաստանի տարուայ մարդը» հայ գիւնուորն է եղել. 18-20 տարեկան մեր տղաները, ում մենք պարտական ենք մեր այսօրուայ խաղաղ տօնական եռուզեռի, անառիկ, պետական սահմանների համար: Այսպիսի կարծիք ու գնահատական հնարաւոր է, որ էլի է եղել, եւ մենք կրկնում ենք, բայց միեւնոյնն է, դրանից իրականութիւնը չի փոխուում: Արդէն մի քանի տարի շարունակ հայ գիւնուորն այն մարդն է, ում կենացը վստահաբար պէտք է խմուի տօնական բոլոր սեղանների շուրջ, եւ սա հենց այն կենացն է, որը խմուելու է լիաթոք, եւ մաղթանքները, վստահ ենք, բխելու են ցանկացած հայ մարդու սրտից:

Սոցիալական ծանր պայմաններում ծնուած ու ձեւաւորուած անկախութեան սերունդը, գէնք ի ձեռքին, մեծագոյն նուիրումով պաշտպանում է հայրենիքն ու երկիրը՝ դրա համար երբեմն վճարելով ամենաթանկ գինը՝ սեփական կեանքը:

ՀՀԿ խօսնակ Շարմազանովը օրերս կարծիք էր յայտնել, որ խաղաղ պայմաններում սահմանին գոհուած մեր տղաները այն գինն են, որը մենք վճարում ենք անկախութեան համար: Իսկապէս շատ ծանր գին է սա, եւ շատ ծանր:

Ընդհանրապէս սահմանին գոհուած տղաների ու անկախութեան արժէքի մասին արտայայտուելը շատ լուրջ զգուշութիւն է պահանջում, եւ յատկապէս Շարմազանովի կարգի իշխանաւորները:

Չափազանց աչալուրջ պէտք է լինեն: Շարմազանովի յայտարարութիւնը կարող է ձանաչուել «տարուայ ցինիզմ» անուանակարգում, միւս կողմից էլ այն չափազանց վտանգաւոր է, որովհետեւ եթէ գոհերն այն գինն են, որը մենք:

Վճարելու ենք անկախութեան համար, ո՞րն է այն գինը, որը

վճարել են Շարմազանովն ու նրա նմանները այդ նոյն անկախութեան համար: Իշխանութեան գազաթին հասած մի քանի այլ տղաների հետ Շարմազանովը վայելում է անկախութեան պտուղները: Այս տղան, բանակ չձառաչելով, ստացել է պաշտպանութեան նախարարութեան մի շարք մեղաքններ եւ հիմա էլ անկախութեան գնից է խօսում:

Ամէն անգամ, երբ տեսախցիկների առաջ նկարուելու նպատակով կամուֆլիաժ հագած տղաները խօսում են սահմանին գոհուած տղաների մասին, օղուով կախուած մի հարց է մնում՝ իսկ ինչո՞ւ այդ գոհը նրանք չեն:

Բախտախնդիրներին թուում, թէ առաջին գծում որդի կորցրած մայրերը իրաւունք չունեն այդ հարցը բարձրացնել:

Խնդիրն այստեղ գլոբալ առումով Շարմազանովի անձն ու արած յայտարարութիւնը չեն: Խնդիրն ընդհանրապէս Երեւանի կեդրոնի ու Հայաստանի սահմանի անհամարժէքութեան մէջ է: Սահմանին գոհուած գիւնուորականները մեծ մասամբ ժամկէտային գինձառաչողներ են լինում՝ 18, 20 կամ 22 տարեկան: Ժամկէտային գինձառաչողներին առաջին գծից հեռու պահելու խնդիրը պաշտպանութեան նախարարութիւնը չի կարողանում լուծել՝ պատճառաբանելով, թէ՛ առաջապահ պրոֆեսիոնալ ստորաբաժանում պահելը թանկ ծառայութիւն է մեր բանակի ու պետութեան համար: Ոչ մի գին չի կարող աւելի բարձր լինել, քան գենոֆոնդն է, իսկ իրական ֆինանսական գինը մեր հասարակութիւնն ու առաջին հերթին անկախութեան գնի մասին խօսող բանակ չձառաչողները պարտաւոր են վճարել սեփական գրպանից:

Իմիջիայլոց, սա նոյնպէս անկախութեան գինն է, եւ արդար կը լինի, որ անկախութեան պտուղներից օգտուողները վճարեն այն: Օրինակ՝ կարող է աշխատավարձի 1 տոկոսը պահուել առաջին գծի համար: Կարելի այլ տարբերակներ եւս մտածել, բայց կարծես թէ նման նպատակ առայժմ չկայ: Հաստատիոր գեներալները ովքեր իրենց միլիոնները վաստակում են նաեւ «բանակից ազատելու գործեր դեղով» հաւանաբար պատրաստ չեն ընդունել այդ գինը: Բայց արդար չէ, երբ անկախութեան գինը ստիպուած են լինում վճարել հիմնականում սովորական, անապահով շերտի ընտանիքների տղաները, իսկ մնացածները զբաղուած են՝ այդ գինը սակարկելով: «ՀԱՅԵԼԻ»

Իշխանութեան Իրական Ուղերձը

Իշխանութեան տարբեր ներկայացուցիչներ ուղերձներ են յղում եւ շնորհաւորում են քաղաքացիներին Տարեմուտի եւ Սուրբ Ծննդեան տօների կապակցութեամբ, մաղթում են զանազան լաւ բաներ, յուզում են, տեղ-տեղ նոյնիսկ լացացնում իրենց բարեմաղթանքներով: Ինչպէս նուէր տուած ձիուատամները չեն հաշուում, երեւի այնպէս էլ իշխանական ուղերձները չեն մեկնաբանուում, որովհետեւ իշխանութիւնը, մեծ հաշուով, մի ուղերձ ունի հասարակութեանը՝ կեանքը: Իշխանութեան միակ ու անփոխարինելի ուղերձը այն կեանքն է, որով ապրում է հասարակութիւնը:

Ահա այդ իմաստով իշխանութիւնը 2016 թուականին շատ վատ ուղերձ է յղել հանրութեանը, նոյնիսկ կարելի է ասել, որ ոչ մի ուղերձ էլ չի յղել, քանի որ քաղաքացիներին կեանքը որեւէ յորտում չի դարձել էապէս աւելի լաւը, աւելի անվտանգ, իրաւապէս աւելի պաշտպանուած, աւելի ազատ, բարեկեցիկ, արժանապատիւ: Այդ կոմպոնենտներից եւ ոչ մէկի առումով իշխանութեան ուղերձը 2015 թուականին չի ստացուել, եւ սա արդէն իրականացուած փաստ է, որը ի գորու չեն փոխել կամ կոծկել առաւելապէս տօնական կենացներ յիշեցնող պաշտօնական ուղերձները, որ զանազան պաշտօնեաներ յղում են ժողովրդին, որ նոյն բանը Դեկտեմբերի 31-ի գիշերը կանի Սերժ Սարգսեանը:

Նրանք բոլորը միասին տապալել են իրենց բուն գործը, իսկ մնացեալը ընդամէնը դէմք փրկելու ձեւական աւանդոյթ է: Աւելին, իշխանութիւնը ոչ միայն ձախողել է իր տարեկան «ուղերձը», այլեւ նոյնիսկ անարդիւնաւէտ տարուայ պատճառով էլ աւելի է մեծացրել հանրութեան հիասթափութիւնը սեփական երկրից, սեփական պետութիւնից, որն այս տարի էլ մնաց ընդամէնը մի խումբ մարդկանց կալուածք, որոնք շահագործում են այդ երկրի իրական տէր լինելուն կոչուած քաղաքացիներին, նրանց համբերութիւնը: Իշխող համակարգը տարուայ ընթացքում ապա-

չ է կայ՝ դա մեր հարեւանն է, որտեղ առաջարկում է անցկացնել ամանորեայ տօները: Հիւրանոցների մի հակայական ցանկ է նա ինձ ուղարկել, որտեղ գները հաստատ գիշում են մեր ծաղկաձորեան գներին: Իսկ զուարճութիւններն էլ շատ աւելի բազմազան են, քան մեզ առաջարկում են տեղական հանգստավայրերը, որոնց սեփականատէրերն աւելի շատ մտածում են այս մի քանի օրուայ մէջ իրենց տարեկան հասոյթն ապահովելու, քան հանգստացողների աւօրեան բազմազան ու հետաքրքիր դարձնելու մասին: Ծանապարհն է մի քիչ երկար ու յոգնեցուցիչ, սակայն Հիւսիս-հարաւ ճանապարհի կառուցումից յետոյ այդ խնդիրն էլ կը վերանայ: Արագընթաց ու բարեկարգ ճանապարհով Վրաստան հասնելը կը դառնայ առաւել հաճելի եւ շատ ժամանակ չի իսլի: Այնպէս որ, մեր հանգստավայրերի ազահ տէրերը մտածելու բան ունեն՝ կամ պէտք է իրենց գնային քաղաքականութիւնը վերանայեն, կամ նոր, առաւել հետաքրքիր զբաղմունքներ, ծառայութիւններ առաջարկեն:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

Լինեց առաւելապէս իմիտացիաներին՝ փորձելով հնարաւորինս անտեսել հանրային որեւէ գործօն:

Աւելին, պետութեան համար կարեւորագոյն՝ թէ՛ արտաքին, թէ՛ ներքին խնդիրների լուծման առումով համակարգը շարունակեց ապաւինել առաւելապէս արտաքին քաղաքական կեդրոններին՝ փորձելով հարցեր լուծել ոչ թէ հասարակութեան վրայ յենուելով, այլ գերտէջութիւնների միջեւ մանևերելով: Այլ կերպ ասած, հասարակութիւնն անցնող տարում էլ իշխանական ինքնագիտակցութեան մէջ մնաց որպէս հակառակորդ, մրցակից, թշնամի: Մինչդեռ ցանկացած առողջ իշխանութեան համար հասարակութիւնը գործընկեր է, թէեւ, թիկունք, անվտանգութեան երաշխիք: Նոր տարում Հայաստանին երեւի թէ պէտք է մաղթել հենց այդպիսի իշխանութիւնը, որի համար հասարակութիւնը հենց այդպիսին կը լինի: Այլապէս, ինչ է պետութիւնը, եթէ ոչ հասարակութիւնն ինքնին, եւ եթէ որեւէ իշխանութիւն հասարակութեանն է անտեսում, հասարակութեանն է համարում իրեն մրցակից, հակառակորդ, թշնամի, ուրեմն անտեսում է պետութեանը, պետութեանն է թշնամի համարում:

Յաւօք, հենց դա էր իշխանութեան իրական ուղերձի բուն բովանդակութիւնը ամբողջ տարուայ ընթացքում՝ արտայայտուած իշխանութիւն-հասարակութիւն տիրոյթի զանազան իրադարձութիւնների տեսքով: Մնում է միայն յուսալ, որ 2016 թուականին կամ ուղերձը կը փոխուի, կամ վերջապէս կը փոխուեն ուղերձի հեղինակները:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
ԽՍԲԱԳԻՐ՝
SOPH. UNCUY GUMUSLU
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

Դեպի Վրաստան

ԱՐՄԻՆԷ ՕՀԱՆՅԱՆ

Ամանորեայ տօներն արտերկրում անցկացնող հայերի ցանկը թերեւս կրճատուել է՝ ամէն տարի արտասահմաններում Նոր տարին դիմաւորող գրեթէ բոլոր ծանօթներս այս տարի որոշել են ոչ մի տեղ չգնալ, մնալ Երեւանում: Պատճառը ոչ միայն ֆինանսական դժուարութիւններն են, որ հայ ազգն ապրում է այս տարի, այլեւ այն, որ աշխարհում հանգիստ չէ, եւ, հաւանաբար, ամենախաղաղ ու ապահով երկիրը հիմա Հայաստանն

է, որտեղ չեն կրակում, որտեղ ինքնաթիռներ չեն պայթեցնում, որտեղ իսլամիստ ահաբեկիչներ չկան: Թէեւ Նոյեմբերի 25-ի վնասագերծումից յետոյ եւ սահմանային լարուած-ութեան ֆոնին գէնքի ու պայթիւնների մասով չենք կարող շատ վստահ լինել:

Անուամենայնիւ, Հայաստանն այժմ կարող է դասուել աշխարհի ամենաապահով երկրների շարքը: Սակայն Վրաստանին սիրահարուած ընկերս պնդում է, որ Հայաստանից աւելի ապահով ու էփան մի երկիր

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱԿ-ը Հրապարակել է Հանրաքուէն Անվաւեր Գնահատելու Դիմումի Իրաւական Հիմքերը

Հայ Ազգային Կոնգրէսը (ՀԱԿ) հրապարակել է հանրաքուէն անվաւեր ճանաչելու դիմումի իրաւական հիմքերը: Ծաւալուն փաստաթղթում, որն ընդգրկում էր կուսակցութիւնը փոխանցել էր կենտրոնական Ընտրական Յանձնաժողով եւ Սահմանադրական դատարան, վկայակոչուած են ընտրակեղծիքների բազմաթիւ օրինակներ՝ սկսած քարոզչութեան շրջանում վարչական ռեսուրսի չարաշահումից մինչեւ ուրիշ փոխարէն համատարած քուէարկութիւններ, լցումներ:

«Նրանք, ովքեր ասում են, որ մենք փաստեր չունենք կամ չենք հաւաքել, չենք բերել, ներկայացրել, նրանք անխտիր ստում են, որովհետեւ իրականում հաւաքուած փաստերը, նրանց համադրութիւնը եւ վերլուծութիւնը ապացուցում են մաթեմատիկական ճշգրտութեամբ, որ հանրաքուէն կեղծուել է, որ ժողովուրդը իրականում ասել է «ոչ», բայց ժողովրդին ներկայացրել են լրիւ գլխիվայր շուռ տուած արդիւնքներ», - ասաց ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը:

Միաժամանակ ՀԱԿ-ը յանցագործութեան մասին շուրջ ութ տասնեակ հաղորդում է ներկայացրել իրաւապահներին, առաջիկայում եւս 70-ը կ'ուղարկեն, բայց Դատախազութիւնն առայժմ չի շտապում արձագանքել:

«Անհերքելի ապացոյցներ են ներկայացնում կատարուած յանցագործութեան մասին, սա շատ ծանր ու կեղտոտ յանցագործութիւն է ժողովրդի դէմ կատարուած: Մենք ոչ մի բարի կամ չենք սպասում իշխանութիւններից, բայց մենք դիտենք, որ հասարակական աղմուկը, հանրային այս պարասւանքի մթնոլորտը, միջազգային ճնշումները, նաեւ որոշ յայտարարութիւններ եղան էս ուղղութեամբ, ամբողջ միասին, եթէ մենք կուտենք, պահանջենք, սեղմենք, ինչ-որ արդիւնքի կը հասնենք», - ասաց Զուրաբեանը:

«ԵՏՄ-ի Սէկ Տարուայ Գործունէութիւնը Ցոյց Տուեց, որ Այն Կախուած է Նաւթի Գներից

Լրացաւ Եւրասիական Տնտեսական Միութեան գործունէութեան մէկ տարին: Միութեան ստեղծման հենց առաջին օրերից Հայաստանի Հանրապետութիւնն անդամակցեց այս նորաստեղծ միութեանը: Թէ տնտեսական ինչ արդիւնք տուեց համագործակցութիւնը եւ ինչ հետեւութիւններ պետք է անել՝ հարցերի շուրջ Tert.am-ը գրուցել է տնտեսագէտ Աշոտ Եղիազարեանի հետ:

Նա նշեց, որ թէեւ ԵՏՄ-ն ընդամենը մէկ տարուայ պատմութիւն ունի, սակայն հենց այս մէկ տարուայ ընթացքում ակնյայտ դարձաւ՝ ԵՏՄ-ն հիմնուած է միայն էներգետիկայի, մասնաւորապէս՝ նաւթի գների վրայ:

«ԵՏՄ անդամ երկրները չունեն արդիւնաբերութիւն, իսկ արդիւնաբերութիւն չունեցող միութիւնը չի կարող գրաւել լինել այլ երկրների համար, ձգողական ուժ ունենալ: Այն տեխնոլոգիայէս

նաւթի վրայ հիմնուած տնտեսական միութիւն է, եւ չետամնաց տնտեսութիւն ունի: Վերջին տասը տարիներին Ռուսաստանի տնտեսութիւնն աճել է միայն համաշխարհային շուկայում գրանցուած էներգետիկայի բարձր գնով, հիմա նաւթի անկման պարագայում նրա վիճակը կտրուկ վատացել է»:

Աշոտ Եղիազարեանը նաեւ նշեց, որ 2015թ-ին Հայաստանի տնտեսական անյաջողութիւններն ուղղակիօրէն կախուած են նաեւ Ռուսաստանի ներկայիս սոցիալ-տնտեսական վիճակից:

«Ռուսաստանի միջազգային մեկուսացումը բնականաբար բացասական է ազդել Հայաստանի տնտեսութեան վրայ, իսկ ԵՏՄ-ին անդամակցելով՝ Հայաստանն իրեն վերջնականապէս զրկել է այլընտրանքային հնարաւորութիւններից՝ խուսափելու կամ դուրս գալու համար ստեղծուած վիճակից» - տնտեսագէտ Աշոտ Եղիազարեանը:

«Նոր Հայաստան»-ի Անդամ Գեորգ Սաֆարեանը Կալանաւորուեց Երկու Ամսով

Ամսորի գիշերը իշխանութեան ներկայացուցչի նկատմամբ բռնութիւն գործադրելու համար մեղադրանք առաջադրուեց ակտիւստ Գեորգ Սաֆարեանին, նա երկու ամսով կալանաւորուեց:

Այս մասին Ազատութեանը տեղեկացրեց ակտիւստի փաստաբան Տիգրան Հայրապետեանը ու յաւելեց, որ Սաֆարեանը դատարանի դահլիճում հացադուլ է յայտարարել:

Փաստաբանի խօսքով՝ մեղադրանքի հաստատման դէպքում Սաֆարեանին սպառնում է մինչեւ հինգ տարի ազատազրկում: Կալանաւորելու հիմքն, ըստ Հայրապետեանի՝ դատարանը համարել է այն, որ Սաֆարեանը նախորդ տարուայ Ապրիլի 24-ին զանգուածային անկարգութիւնների նախապատրաստման գործով մեղադրուել է եւ կարող է խոչընդոտել այս գործի քննութեանը. - «Նոր Հայաստան» քաղաքական միւլտրոման անդամները Ամանորի գիշերը Ազատութեան հրապարակում փորձել էին տօնական եղեւնի տեղադրել, սակայն դա աւարտուել էր



Կալանաւորուած ակտիւստ Գեորգ Սաֆարեան

ոստիկանների հետ բախմամբ: Հինգ քաղաքացիներ բերման էին ենթարկուել եւ աւելի ուշ բաց թողնուել, իսկ Գեորգ Սաֆարեանը ձերբակալուել էր: Սաֆարեանի դէմ բողոք է ներկայացրել ոստիկանութեան յատուկ ջոկատի 4-րդ վաշտի հրամանատար Գեղամ Խաչատրեանը: Սաֆարեանի շահերի ներկայացուցչի պնդմամբ՝ Խաչատրեանի կողմից իր նկատմամբ կիրառուած բռնութեան մասին առաջինը հաղորդագրութիւն է ներկայացրել Գեորգ Սաֆարեանը, սակայն դրան դեռ ընթացք չի տրուել:

«ԲՀԿ-ն Չէր Կարող Իշխանափոխութիւն Իրականացնել, Կարող Էր Ապականել Քաղաքական Դաշտը».- Արտակ Չաքարեան

2015 թուականի ձեռքբերումը Հայաստանի՝ Եւրասիական Տնտեսական Միութեանն անդամագրումն է: Այս մասին NEWS.am-ի հետ զրոյցում ասել է ԱԺ արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի ղեկավար Արտակ Չաքարեանը՝ անդրադառնալով 2015 թուականի ձեռքբերումներին:

«Տնտեսական առումով չեմ կարող ասել, որ ունեցանք ձեռքբերումներ: Իսկ քաղաքական առումով ունենք ձեռքբերումներ, օրինակ ԵՏՄ-ին անդամակցութիւնը, դրա շրջանակում ակտիւ դերակատարութիւնը քաղաքական դիւրեւանների տեսակէտից», - ասաց Չաքարեանը:

Անդրադառնալով ընդգրկմախօսների այն պնդումներին, որ ԵՏՄ-ին անդամակցութիւնը իշխանութիւնը պայմանաւորում էր անվտանգութեան ուժեղացմամբ, սակայն սահմանային լարուածութիւնն աւելի ուժեղացաւ, իսկ ՀԱՊԿ-ն այդպէս էլ որեւէ կերպ չաջակցեց Հայաստանին, Չաքարեանը նշեց. «Նայած թէ ով ինչպէս է ընկալում անվտանգութիւնը: ՀՀ անվտանգութիւնը երաշխաւորում են ՀՀ զինուած ուժերը: Եւրասիական տնտեսութիւն մտնելով՝ աւելի սերտացան հայ-ռուսական յարա-

բերութիւնները եւ Հայաստանի դեմ ՀԱՊԿ համակարգում, իսկ սահմանին զոհեր մենք միշտ ունեցել ենք: Ինչ ենք ակնկալում ՀԱՊԿ-ից, որ դադարական զօրքերը գան կանգնեն սահմանին»: Այո, ՀԱՊԿ-ից մենք ակնկալում ենք քաղաքական աջակցութիւն, բայց նոյնիսկ այդ աջակցութիւնն ունենալու պահին Ատրպէյճանը շարունակում է կրակել: ԱՄՆ-ն անընդհատ խաղաղ կարգաւորման կոչ է անում, բայց ի՞նչ է անում Ատրպէյճանը, շարունակում է կրակել»:

Մեր հարցին, թէ ձեռքբերում համարում են տարեսկզբին իշխանափոխութիւն խոստացած ՀԱԿ-ԲՀԿ դաշինքի ջլատումը, Ծառուկեանին քաղաքականութիւնից հեռացնելը, ՀՀԿ-ական պատգամաւորն արձագանքեց. «ԲՀԿ-ն չէր կարող իշխանափոխութիւն իրականացնել, կարող էր ապականել քաղաքական դաշտը իր գործողութիւններով: Ես ապականել ասելով՝ նկատի ունեմ ներքին կայունութեան խաթարման տեսակէտից, եւ դա կարող էր Հայաստանի համար լրացուցիչ խնդիրներ առաջացնել: Ինչը մեր գործընկերները հասկացան եւ ժամանակին կասեցրին իրենց գործողութիւններն»:

«Եթէ Կարողանում Ենք Գոյատեւել, Էլի Մեծ Յաջողութիւն է».- ՀՀԿ-ական Պատգամաւոր

Եւ յաջողութիւնները, եւ անյաջողութիւնների տարի էր 2015 թուականը. յաջողութիւնն այն էր, որ բոլոր դէպքերում հնարաւոր եղաւ խաղաղութիւնը պահպանել: Այս մասին NEWS.am-ի հետ զրոյցում ասաց ՀՀԿ խմբակցութեան պատգամաւոր Համլետ Յարութիւնեանն՝ ամփոփելով 2015 թուականը: Նրա խօսքով, 2015-ի նշանակալի իրադարձութիւնը Յեղասպանութեան 100-ամեայ տարելիցն էր. «Չեմ ուզում Յեղասպանութեան վերաբերեալ շատ խօսել, ասել՝ յաջողութիւն էր, բայց յամենայնդէպս միջոցառումների ամբողջ գործընթացը, մեր պետութեանը մեծ ճանաչելիութիւն տուեց»:

Ինչ վերաբերում է տնտեսական դժուարութիւններին, ապա դրանք, մեր գրուցակցի խօսքով,

պայմանաւորուած էին տարածաշրջանային տնտեսական մարտահրաւէրներով: «Ես անկեղծօրէն պէտք է ասեմ, որ անգամ այս պայմաններում եթէ կարողանում ենք գոյատեւել, էլի մեծ յաջողութիւն է», - ասաց պատգամաւորը:

Պատգամաւորը վստահեցրեց, որ իրավիճակը շտկելու կամք բարձրադրին իշխանութեան մէջ տեսնում է եւ երկրի իրավիճակի պատասխանատու առաջին դէմքերի կամքին չի կասկածում, բայց կարծում է, որ երկրորդ էջերին պաշտօններ զբաղեցնողներն իրենց տեղում չեն:

Համլետ Յարութիւնեանը յորդորեց «քել» նման պաշտօնեաներին: «Եթէ ես վատ պատգամաւոր եմ, կողմ եմ, որ ինձանից էլ ազատուեն», - ամփոփեց նա:

Հայաստանում Աւելացել Է Թե՛ Աշխատանք Փնտռողների, Թե՛ Գործազուրկների Թիւր

2015 թուականի Յունուար-Նոյեմբեր ամիսներին ՀՀ-ում աշխատանք փնտռողների թիւը կազմել է 88 հազ. 850 մարդ, որից գործազուրկ են 76 հազ. 471-ը:

Նշենք, որ 2014թ-ի նոյն ժամանահատուածի համեմատ աւելացել է թէ՛ աշխատանք փնտռողների, թէ՛ գործազուրկների թիւը՝ համապատասխանաբար 22,9%-ով եւ 15,6%-ով: Այս ցուցանիշներն առկայ են Ազգային վիճակագրական Ծառայութեան վերջին հրապարակման մէջ: Առանձնացնելով ցուցանիշն ըստ սեռի՝ նշենք, որ աշխատանք փնտռողներից 59 հազ.781-ը կանայք են, իսկ 29 հազ.69-ը՝ տղամարդիկ: Աշխատանք փնտռողներից 22 հազ. 376-ը երիտասարդներ են, իսկ գործազուրկներից՝ 19 հազ. 158-ը:

Երեւանում 24-ամեայ Աղջիկն Ընկել Է 8-րդ Յարկից ու Ողջ Մնացել

Երեւանում Յունուարի 3-ին 24-ամեայ աղջիկը ընկել է շէնքի 8-րդ յարկից ու ողջ մնացել:

Արտակալ իրավիճակների նախարարութիւնից NEWS.am-ին տեղեկացրել են, որ վ. Համբարձումեան փողոցի թիւ 47 շէնքի բակում երիտասարդ աղջիկ է ընկած: Նախնական տուեալներով՝ 24-ամեայ Անի Հայրապետեանը լուացքի պարանները վրայ է ընկել, յետոյ ձնակոյտի մէջ, այդ պատճառով ողջ է մնացել:

ԼՈՒՐԵՐ

Սէյրան Օհանեան.- «2015-ին Հայկական Բանակը Փայլուն Կատարեց Իր Առաքելութիւնը»



Տօնական օրերուն առթիւ Սէյրան Օհանեան կ'այցելէ գոհուած մարտիկներուն հարազատներուն

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը ամառնորեայ ուղերձ է յղել, որում «առողջութիւն, երջանկութիւն եւ ամենախաղաղ խաղաղութիւն» մարտիկները գինձառայողներին, «արցախեան ազատամարտի գինակիցներին» ու գոհուած մարտիկներին հարազատներին, նշում է՝

«2015 թուականին հայկական բանակը փայլուն կատարեց իր առաքելութիւնը՝ գինուած դիմակայութեան պայմաններում պաշտպանելով Հայրենիքի սահմանները: Եւ երբ քիչ յետոյ լոյսնային տարեմուտի գանգերը, մենք նաեւ կը թերթենք Հայկական բանակի տարեգրութեան եւս մի էջ, որը լի էր հերոսականութեամբ, աննախադէպ մեծ թուով դիւերսիոն խմբերի ջանքերով, դժբախտաբար, նաեւ անդառնալի կորուստներով, որոնք բոլորս ենք սգում, եւ հիմա հոգով ու սրտով պիտի գոհուած գինձառայողներին հարազատներին հետ լինենք:

Միմեանց նոր տարին շնորհաւորելիս պիտի բաժակ բարձրացնենք նաեւ Հայրենիքի սահմանները պաշտպանելիս գոհուած գինուորների ու սպաների համար, իսկ Սուրբ Ծննդեան տօնին մէկական մոմ վառելով՝ պիտի խոնարհուենք մեր որդիների ու եղբայրների պայծառ յիշատակի առջեւ եւ «Յաւերժ փառք ու պատիւ» տանք նրանց:

Շուեղիայի Գործերի Հաւատարմատարի Կարծիքով՝ Հայաստանի Մարդկային Կապիտալը Կարող է Սօտ Լինել Եւրոպային

Հայաստանն անկասկած եւրոպական երկիր է: Հայաստանը մարդկային մեծ կապիտալ եւ ներուժ ունի, որը կարող է մօտ լինել Եւրոպային, այդ թւում նաեւ՝ Շուեղիային: Այդ մասին NEWS.am-ին տուած հարցազրոյցում յայտնել է Շուեղիայի Թագաւորութեան գործերի ժամանակաւոր հաւատարմատար Մարտէն Էնքերգը՝ անդրադառնալով Եւրոպայի համար Հայաստանի կարեւորութեանը:

Նրա խօսքով, Հայաստանը շատ իւրայատուկ աշխարհագրական դիրք ունի: «Այն Եւրոպայի համար հետաքրքրութիւն ներկայացնող շատ երկրների միջեւ է գտնւում: Բայց Հայաստանն ինքը շատ հետաքրքիր առանձնայատ-

Մենք հրաժեշտ ենք տալիս մի թուականի, երբ գինադադարի հաստատումից ի վեր հակառակորդն առաջին անգամ, եւ կարծում եմ՝ նաեւ արտաքին հրահրմամբ, կիրառեց հրանոթներ, տանկեր ու թուրքական արտադրութեան համազարկային կրակի հրթիռային կայանքներ: Փոխարէնը ստացաւ վճռական պատասխան, եւ միշտ այդպէս կը լինի, մինչեւ բոլոր կարճամիտները հասկանան, որ մեզ հետ չեն կարող ուժի լեզուով խօսել, ինչպէս ի գործը չեղան արցախեան ազատամարտի տարիներին: Իսկ դրա ամենամեծ գրաւականը միասնութիւնն ու հանդուրժողականութիւնն է, որոնք պիտի փայտայենք ու պահպանենք:

Այս ամենին գուզնութաց, խոշոր առաջընթաց արձանագրեցինք գինուած ուժերի հզօրացման եւ սահմանների պաշտպանութեան ամրապնդման գործում. մեծ աշխատանքներ իրականացուցին մարտական հերթապահութեան անվտանգութեան ու մարտական պատրաստականութեան բարձրացման ասպարէզներում, շարունակուեցին առաջնագծի ինժեներական կահաւորման արդիականացումն ու գործանոցային շինարարութիւնը, իսկ բազմաթիւ գինձառայողներ ամառնորը դիմաւորում են նոր բնակարաններում»:

կութիւններ ունի», - նշել է Էնքերգը: Դիւանագէտի կարծիքով, Շուեղիան Հայաստանի հետ դրական համագործակցութեան մեծ փորձ է կուտակել արդէն: «Հայկական ծագումով մօտ 12 հազար մարդ արդէն ապրում է Շուեղիայում: Նրանք բաւականին դրական ներդրում են ունենում երկրի հասարակական կեանքում: Հայաստանն ու Շուեղիան պահպանում են քաղաքական յարաբերութիւնների շատ բարձր մակարդակը: Այդ պատճառով Հայաստանը շատ առումներով կարեւոր է: Հայաստանը հսկայական ներուժ ունի, որը դեռ չէք իրացրել եւ Շրջանակային համաձայնագիրը կ'օգնի անել դա», - ամփոփել է Մարտէն Էնքերգը:

Սթրատֆորի Վերլուծում.- «Նոր Տարուն Ռուս-Թուրքական Հակամարտութիւնը Կը Սրուի»

Միջազգային յայտնի «Սթրատֆոր» վերլուծական կենտրոնի պատրաստած վերջին գեկոյցի համաձայն, 2016 թուականի ընթացքում Ռուսաստանի եւ Թուրքիայի առճակատումը պէտք է սրուի:

Յաջորդ տարուայ աշխարհաքաղաքական հիմնական կանխատեսումների գեկոյցում ամերիկացի փորձագէտները նշում են, որ չնայած «Իսլամական պետութիւն» կազմակերպութեան թուլացմանը՝ Եւրոպայում եւ Մերձաւոր Արեւելքում 2016 թուականին ահաբեկչական ակտիւութիւնը կ'աճի:

«Իսլամական պետութեան» դէմ պայքարում Թուրքիան կ'ամրապնդի իր դիրքերը: Հաւանաբար, կը նախաձեռնի ցամաքային գործողութիւն Սիրիայի հիւսիսում եւ կ'աւելացնի զօրամիաւորումներն Իրաքում: Ընդ որում, Թուրքերն, ըստ «Սթրատֆոր»-ի, ոչ միայն պայքարելու են «Իսլամական պետութեան» դէմ, այլեւ փորձելու են զսպել Սիրիայի քրդերին:

Ռուս-թուրքական առճակատումը հարաւոր չի լինի կանխել, թէպէտ երկու երկրներն էլ չեն ցանկանում վերջնականապէս խզել տնտեսական յարաբերութիւնները: Թուրքերի գործողութիւններն անխուսափելիօրէն կը հանդեպեն Անկարայի եւ Մոսկուայի շահերի բախման:

Վերլուծաբանները միաժամանակ նշում են, որ Ռուսաստանն, ըստ էութեան, չէր ցանկանայ թուրքերի հետ յարաբերութիւնների հետագայ սրացում, քանի որ Թուրքիան հսկում է ՍԵԵ եւ Միջերկրական ծովերը կապող ռազմավարական նշանակութեան նեղուցները:

Բայց բախումից խուսափել շատ դժուար կը լինի, որովհետեւ Ռուսաստանն աւելացնում է իր ռազմական ներկայութիւնը Սիրիայում եւ կը փորձի խափանել այդ երկրում թուրք գինուորականների նախաձեռնութիւնները:

Վերադարձ 70-ականներ՝ Թուրքիան 2015-ին Այսպէս Բնութագրեցին

Վերադարձ 70-ականներ. պայմանականօրէն այսպէս կարելի է բնութագրել այն ամէնն, ինչ կատարուած էր Թուրքիայում 2015 թուականի ողջ ընթացքում:

Քաղաքական անկայունութիւն, ահաբեկչութեան աննախադէպ աճ, բախումներ քաղաքական տարբեր ուժերի կողմնակիցների միջեւ, համապետական ընտրութիւններ, որոնց ընթացքում քաղաքական ուժերից եւ ոչ մէկը չէր



«Սթրատֆորը» ենթադրում է, որ երկու պետութիւնները չեն ցանկանայ հակամարտութիւնը տեղափոխել ռազմական ոլորտ, քանի որ դա յղի է ամբողջ աշխարհի համար յիրաւի անկանխատեսելի հետեւանքներով:

Սակայն չի կարելի ամբողջութեամբ բացառել վտանգաւոր միջադէպերի կրկնութիւնը. դրա կապակցութեամբ ամերիկացի փորձագէտները յիշատակում են Նոյեմբերի 24-ին թուրքական «Ֆանտոմ»-ների կողմից ռուսական Սու-24 ինքնաթիռը վայր գցելու պատմութիւնը, որը Մոսկուան անուանել է «Ղաւաճանական հարուած թիկունքից» եւ «ռազմական ստոր յանցագործութիւն»:

Ռուսաստանի եւ Թուրքիայի յարաբերութիւնները բաւական լարուած էին նախքան Սու-24-ի կործանումը: Անկարան կորակահարկէս դէմ է Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադին պաշտպանելու Մոսկուայի դիրքորոշմանը:

Սեպտեմբերի 30-ին, երբ ռուսները սկսեցին օդային արշաւը, այդ վէճն էլ աւելի սրուեց, իսկ Սու-24-ի կործանումը պարզապէս դարձաւ այն ջրբաժանը, որից յետոյ ռուս-թուրքական յարաբերութիւնները կարելի է որակել մէկ տերմինով՝ «ծանր ճգնաժամ»:

Հայկական Ծաղկասայլը Դարձեալ Տողանցեց

Շաբունակուած էջ 1-էն

աղանիներ:

Այս տարի, Հայկական ծաղկասայլին վրայ նստած էին նշանաւոր հայեր, որոնց շարքին՝ Սոնա Մովսէսեան, որ մեծ ներդրում ունեցած էր ամերիկացի կատակերգակ Գոնըն ՕՊրայլընի Հայաստան այցելութեան եւ հաղորդում պատ-

րաստելու գործին մէջ, Լոս Անճելըսի 5-րդ ալիքի լրագրող էլինա Աբովեան, 11-րդ ալիքի լուրերու հաղորդավար Արաքսիա Կարապետեան, Արմինյըն Օպերովըր թերթի խմբագիր եւ հրատարակիչ Օշին Քէշիշեան, ինչպէս նաեւ Հայաստանի Ֆոլկլորի ազգային խումբի անդամ եւ նախկին Փաստօրինաբանակ՝ Ետերա Մովսէսեան:

Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շաբաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

Փորձագետ. «Հիւսիս-Հարաւ» Ծրագիրը Չախողուել է»



«Հիւսիս-հարաւ» նախագրի շինութեան հրապարակներէն մին

Մինչ իշխանութիւնները մեծ շուքով յանձնուած են «Հիւսիս-հարաւ» ավտոճանապարհի Երեւան-Արտաշատ, Երեւան-Աշտարակ հատուածները, ծրագիրը մշտադիտարկողները պնդում են՝ Հայաստանը դրա շրջանակում շարունակում է աւելացնել արդէն իսկ 1 միլիարդ դոլարի հասած պարտքը:

Վեց տարուայ ընթացքում ճանապարհի 10 տոկոսն էլ չի կառուցուել, եւ անորոշ է՝ ի վերջոյ երբ կ'աւարտուի ռազմավարական նշանակութիւն ունեցող այս մայրուղու շինարարութիւնը:

Ճանապարհի կառուցման համար գումարներ են յատկացրել Եւրասիական, Եւրոպական եւ Ասիական զարգացման բանկերը: Ի սկզբանէ, Հայաստանի կառավարութեան գնահատմամբ, Մեղրին հայ-վրացական սահմանադիմի գտնուող «Բաւրա» անցակէտին կապող ճանապարհի կառուցումը կ'արժենայ մօտ 1 միլիարդ դոլար: Այդ գումարի կէսը վարկի տեսքով տրամադրեց Ասիական զարգացման բանկը:

Բանկի գործունէութեան նկատմամբ վերահսկողութիւն իրականացնող՝ ՀԿ-ների միջազգային ֆորումի հայաստանեան ներկայացուցիչ Սիլվա Աղամեանին մտահոգում է, որ պայմանագրի կնքումից յետոյ 6 տարուայ ընթացքում կատարուած աշխատանքն աննշան է, մինչդեռ, ըստ ծրագրի, «Հիւսիս-հարաւ» աւտոճանապարհը եթէ ոչ ամբողջութեամբ, ապա զգալի չափով պէտք է արդէն կառուցուած լինէր:

«Փոխանակ ճանրութեանը մի շքեղ լաւ ճանապարհ մատուցելը, մենք էսպիսի իրավիճակ ստեղծեցինք, եւ ինչքան ձգուած է այդ վարկը, ինչքան որ ուրիշ բանկերից ու դոնորներից ենք փորձում գումարներ վերցնել, մենք ամբողջ էլ

տոկոսները, բոլոր պէտք է հասկանանք, որ ժողովուրդն է վճարելու», - ասում է Աղամեանը:

Մասնագէտների գնահատմամբ՝ առայժմ պատրաստ է շինաշխատանքների տեսանկիւնից ամենահեշտ ու մատչելի հատուածը: Այսինքն՝ ապագայում պահանջուելու է աւելի շատ փող, քան ծախսուել է մինչ օրս: Աղամեանը վստահ է՝ գիտակցելով, որ եղած գումարն այլեւս չի բաւարարում ծրագիրն աւարտին հասցնելու համար, կառավարութիւնը գործի է դրել փող հայթայթելու նոր միջոցներ: Աղամեանի խօսքով, դիմել են անգամ «էմիրութիւններից ինչ-որ շէնքերի»:

«Բանկի վերջին ճանդիպման ժամանակ բանկի ներկայացուցիչները մեզ հաւաստիացրեցին, որ իրենք տրանշ առ տրանշ են տրամադրում, էլ գումարը կայ: Հարց է ծագում՝ էլ դէպքում ինչու է մեր կառավարութիւնը տարբեր դոնորներից փորձում գումարներ վերցնել: Դա նշանակում է, որ գումարն իրականում չի բաւարարում: Մեզ տեղեակ պահեցին, որ տեխնիկական խնդիրներ կան, որ գնած է եղել, եւ դրա պատճառով գները փոխուել են: Իրականում եղել է թէ ոչ՝ ես չեմ կարող ասել, ֆիզիկապէս հնարաւոր էր էլ ամէն ինչը ստուգել: Բայց բոլորիս համար պարզ է, որ էլ գումարները փաստօրէն չկան», - շարունակում է Սիլվա Աղամեանը:

Այն մասին, որ միջոցները չեն բաւարարում, դեռ անցած տարի Փետրուարին Ազգային ժողովում փայտնել էր այն ժամանակ վարչապետ Տիգրան Սարգսեանը: Աւտոճանապարհի կառուցումն էլ տեւական ժամանակով դադարեցուել էր: Ըստ Տիգրան Սարգսեանի, ծրագրի ձգձգման պատճառը նաեւ «փորձի, գիտելիքների եւ կարողութիւնների

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ ՆԱԽԱԳԱՅ ԾՐԱԳՐԷ ԳՈՒՊԱ ԱՅՅԵԼԵԼ

Միջազգային լրատու գործակալութեանց համաձայն ԱՄՆի նախագահ Օպաման կը ծրագրէ այս տարուան ընթացքին Գուպա այցելել: Իր այս այցելութիւնը կրնայ շահաբեր ըլլալ թէ քաղաքական եւ թէ մասնաւորաբար տնտեսական տեսակէտով: Այսպիսով դռները լրիւ բացուած պիտի ըլլան ամերիկացի գործարարներուն համար: Այսպիսով պաղ պատերազմի լարուածութիւնն ալ աւելի մեղմացած պիտի ըլլայ, մասնաւորաբար երկու երկիրներու միջեւ դիւանագիտական կապերու հաստատումէն ետք:

Միւս կողմէ Օպամայի վարչակարգը կը մտածէ կազմալուծել բոլոր անբեկչական շարժումները, վերջ տալու համար Սուրիոյ եւ տարածաշրջանի խռովայոց վիճակին: Այս կապակցութեամբ ան լուրջ խորհրդակցութիւններ պիտի ունենայ Լեհաստանի մէջ տեղի ունենալիք ՆԱԹՕի յառաջիկայ խորհրդաժողովի ընթացքին:

ՍԱՍՏԻԿ ԼԱՐՈՒԱԾ ՎԻՃԱԿ ՍԵՌԵՏԱԿԱՆ ԱՐԱՔԻՈՅ ԵՒ ԻՐԱՆԻ ՄԻՋԵՒ

Անցեալ շաբաթ Մէուտական Արաբիոյ 12 քաղաքներու բանտերուն մէջ մահապատիժ գործադրուեցաւ 47 շիիթներու հանդէպ, որոնց մէջ կար նաեւ կրօնաւոր մը: Անոնք կ'ամբաստանուէին երկրէն ներս անբեկչական եւ այլ վնասաբեր արարքներու կազմակերպութեամբ:



Արդարեւ սուրով գլխատուած 47 ձեռքաւորներու շարքին էր Շէյխ Նիմր Ալ Նիմրը: 1980 թուականէն ի վեր այս մէկ առաջին զանգուածային գլխատումն էր: Այս ձեւի մահապատիժի գործադրութիւնը բուռն կերպով քննադատուեցաւ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Պանկըու Մունի կողմէ: Միջազգային ներման կազմակերպութիւնը եւս դատապարտեց Մէուտական Արաբիոյ այս արարքը, քանի որ միայն 2015 թուականին 157 այլախոհներ նման պատիժի ենթարկուած են հաստատուելով մրցանիշ կատարուող երեւոյթ մը:

Շիիթներու դէմ գործադրուած մահապատիժը իր հակազդեցութիւնն ունեցաւ Լիբանանի եւ Իրանի մէջ, ուր տեղի ունեցան զանգուածային ցոյցեր: Թեհրանի մէջ ցուցարարներ հրթիռներ արձակեցին տեղուց Մէուտական Արաբիոյ դեսպանատան վրայ: Լարուածութիւնն իր զգաթնակէտին համեմատ Մէուտական Արաբիան, Պահլէյնը եւ Սուտանը իրենց դիւանագիտական յարաբերութիւնները խզեցին Իրանի հետ:

Ֆրանսա, Գերմանիա, Բրիտանիա եւ ԱՄՆ կոչ ուղղեցին լարուածութիւնը մեղմացնելու: Նշենք նաեւ որ շրջանի արժէթիթերու սակերն ալ իրենց վերիվայրումներն ունեցան միաժամանակ ազդելով միջազգային սակարաններուն վրայ:

պակասն» է եղել, թէպէտ շինարարական աշխատանքներն աւելի քան երկու տարի ընթանում էին:

Սկզբնապէս նախատեսուած է եղել, որ «Հիւսիս-Հարաւ»-ի շինարարութիւնը կ'աւարտուի 2016-2018 ժամանակահատուածում: Աւելի ուշ սկսեցին խոստումներ հնչել, որ այն կ'աւարտուի 2019-ին: Մշտադիտարկում իրականացնող կազմակերպութիւնը, մինչդեռ, աւելի քան վստահ է՝ «այժմեան տեմպերով եւ ֆինանսական կորուստներով» ծրագիրը դժուար թէ մինչեւ 2025 թ. իրականութիւն դառնայ:

6 տարուայ ընթացքում մամուլում չեն դադարել հրապարակումները ծրագրի հետ կապուած կողուպցիոն ռիսկերի մասին: Շի-

նարարական աշխատանքների մեկնարկից մէկ տարի անց աշխատանքից ազատուեց «Հիւսիս-հարաւ» ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպութիւն» ՊՈԱԿ-ի տնօրէն Արա Յովսէփեանը: Պաշտօնական հաղորդագրութեան մէջ նշուած չէր ազատման պատճառը, սակայն, աւելի ուշ յայտնի դարձաւ, որ վերահսակիչ պալատի ստուգման արդիւնքում թերացումներ են բացայայտուել:

Շինարարութեան ողջ ընթացքը մշտադիտարկող մասնագէտ Աղամեանի կարծիքով՝ ծրագիրը թէպէտ ռազմավարական մեծ նշանակութիւն ունի, այդուհանդերձ, փաստերը վկայում են՝ այն այսօր ձախողուած է:

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաճեցու է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ՊԱՏԳԱՍ ՍՐՈՒԲ ԾՆՆԴԵԱՆ

Ո՛վ մանուկ Յիսուս, շուտապես հովիվներուն նման՝ անթարթ աչքերս համեստ մտուրի մէջ ծուլաբար աստուածային անհունիդ սեւեռած եմ: Ու մինչ կը ջանամ Սուրբ Ծննդեանդ 2000-ամեայ անչափելի խորհուրդը կշռել, ակնթարթի մը մէջ անցնող տարուան դէպքերը կու գան աչքիս առջեւ: Աշխարհն ինչ վայրիվերումներով անցաւ՝ ծնողքիդ Նազարէթէն Բեթղեհէմ գալուն պէս: Նորածին Յիսուս, կաթնաբոյր անմեղութեանդ հանգստութիւնը տուր մեզ:

Արեւելքէն փրկչարար մեծութեանդ առջեւ երկրպագելու եկած մոգերուն կը դիտեմ ակամայէն միտքս կու գան անցնող տարուայ արեւելքի խժողովները: Յիշողութեանս մէջ թարմ են դեռ տարեկանքի արիւնհեղութիւնները Նայճերոյ եւ Եմենի մէջ: Աղօթքով կը չիշեմ ահաբեկիչներու կողմէ գլխատուած Եգիպտացի քրիստոնէայ նահատակները: Ափսոսանքով եւ ցատկով կը մտաբերեմ հնագոյն պատմական յուշարձաններու կործանումը իրաքի մէջ: Նորածին Յիսուս, ծննդեանդ աւետիսով հաշտեցուր մեզ:

Ձմրան ցուրտին մէջ գառնուկներու շունչով ջերմացած օթեւանիդ կը նայիմ ու սիրտս կու լայ անօթեւան գաղթականներուն համար, նաեւ անոնց, որոնք գոհուեցան զանազան բնական աղէտներէ: Հոգիիս ընդերքը կը ցնցուի անասելի սարսուռէն հաւոր երկրաշարժերու, որ պատահեցան Նեփալ, Փակիստան, Աֆղանիստան եւ այլուր: Կը չիշեմ ու կը սգամ մահը հազարաւոր անշիրիմ ճամբորդներու, որոնք անսպասելի հեռացան աշխարհէն օդանաւի, ծովային եւ այլ արկածներու պատճառաւ Եգիպտոսի, Սուտանի, Ինտոնիզայի, Ֆրանսայի, Թայլանդի, Մալիի, Պրագիի, Ուկրանիոյ մէջ եւ այլուր: Նորածին Յիսուս, մխիթարէ մեզ: Եղբայրասպան պատերազմներ, առեւտրային շարժակունքներ, ահաբեկիչ պայթիւններ Ափրիկէի, Մերձավոր եւ Միջին Արեւելքի մէջ

արիւնով ներկեցին անցնող 2015 թուականը: Տակաւին թաց են մեր աչքերը Փարիզի եւ Սան Պետրոսի տինոյի մէջ տեղի ունեցած անմարդկային ոճիրներէն: Նորածին Յիսուս, խաղաղութիւնդ տուր մեզ: Քո Սուրբ Ծնունդը աղբիւրն է նոր կեանքին՝ ճշմարիտ ուրախութիւնը, այն նոր գինին, որ պիտի գուարթացնէ օրերը կեանքին: Նորածին Յիսուս, օրհնեալ ըլլայ ծնունդդ:

Աստուածորդուդ աշխարհ գալով Հայր Աստուծոյ ներգործութիւնն ու սէրն է, որ կը զգանք մեր կեանքէն ներս: Նորածին Յիսուս, հոգեւոր երգերով սիրառատ աստուածութիւնդ կ'օրհնաքանեմ:

Որովհետեւ միայն անասման սիրոյդ հասկացողութեան մէջ կը պարզուի խորհուրդը Մարդեղութեան եւ հրաւէրը մարդոց փրկութեան: Այդ հրաւէրին անսալով է, որ կը տօնախմբենք այսօր Սուրբ Ծնունդը՝ աստուածային ներկայութիւնդ վայելելով: Փրկչի՛ն աշխարհի, օրհնեալ ըլլայ Սուրբ Ծնունդդ:

Որովհետեւ Քեզի մերձեանքով, Քեզի ապաւինելով, լոյսիդ հետեւելով, յանձնառութեամբ ու պատասխանատուութեամբ պատուիրաններդ կատարելով կրնամ աննշան գործիք մը դառնալ փրկչական առաքելութեանդ: Իշխան խաղաղութեան, զինուորագրէ մեզ:

Հրաշալի Ծնունդդ խորհրդանշին է յաղթական կեանքին, այն, որ դեռ կ'ապրինք ու կը հաւատանք, յուսովառ ենք ու մահէն չենք վախնար, այն, որ թշնամին չկրցաւ յաղթել, այն, որ լաւատես տրամադրութեամբ կը շարունակենք վատը անտեսել, նորէն ընծիւղուիլ, նորէն բարձրանալ ու վերածնուիլ: Տէր, մեր 1.5 միլիոն նահատակ սուրբերու բարեխօսութեամբ օրհնէ մեզի:

«Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ: Օրհնեալ է Յայտնութիւնը Քրիստոսի»: **ՅՈՎԱՆ ԱՐՔԵՊ. ՏԷՐՏԵՐԵԱՆ Առաջնորդ**

«ԱՆՈՐ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ ՍԵՐՈՒՆԴԵ ՍԵՐՈՒՆԴԿԸ ՏԱՐԱԾՈՒԻ ԻՐ ԵՐԿԻՂԱԾՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ» (ՂՈՒԿԱՍ 1, 50)

Գերջարգելի եւ գերապատիւ վարդապետներ,

Առաքինազարդ քույրեր, Սիրելիներս ի Քրիստոս՝ հայրեր, եղբայրներ եւ քույրեր,

Յոբելյանական ողորմութեան տարուան սեմին՝ երկու հազար տարիներ առաջ Սուրբ Կոյս Մարիամի Մեծացուցէ անձն իմ գտէր փառաբանական աղօթքին մխիթարական այս խօսքերը, 2015ի՝ Մեծ Եղեռնի հարիւրամեակի այս Սուրբ Ծննդեան Տօնին կը ստանան հոգեւոր հզօր եւ իւրաքանչիւր արժէք մը՝ ամբողջ եկեղեցւոյ համար:

Յիրաւի՝ Երեքշաբթի, 8 Դեկտեմբերին, Անարատ Յղութեան տօնին առթիւ, Ֆրանչիսկոս սրբազան քահանայապետը Ս. Պետրոսի Մայր տաճարին մէջ բացումը կատարեց Սուրբ Դրան, որուն չափորդող Կիրակի օրը, 13 Դեկտեմբերին, նոյն հոգեպարար արարողութիւնը կրկնուեցաւ համայն աշխարհի Կաթողիկէ թեմերու Աթոռանիստ եկեղեցիներուն մէջ, որպէսզի առիթը ընծայուի իւրաքանչիւր հաւատացեալ անհատի՝ ըմբռնելու Հօր Աստուծոյ ողորմութիւնը:

Այս ողորմութիւնը կը կերպարանաւորուի Մանուկ Յիսուսի մարդկային դէմքին մէջ, ինչպէս կը բացատրէ նորին սրբութիւն

Ֆրանչիսկոս սրբազան քահանայապետը իր Յոբելյանական Սուրբ Տարուան հռչակման կոնդակին մէջ. «Յիսուս Քրիստոս Հօր Աստուծոյ ողորմութեան դիմանկարն է: Այս բառերը կ'ամփոփեն քրիստոնէական հաւատքի ամբողջ խորհուրդը: Ողորմութիւնը կեանք առաւ եւ շոշափելի դարձաւ Նազովրեցի Յիսուսով՝ համելով իր գագաթնակէտին Անոր անձին մէջ (Misericordiae Vultus, 1): Հետեւաբար՝ առաջին անգամ, մարդկութիւնը կրցաւ տեսնել ու շոշափել Աստուծոյ ողորմութեան կերպարը, երբ Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածինը՝ Յիսուսի մայրը, զինք ներկայացուց Բեթղեհէմի քարայրին մէջ:

Մարիամ Աստուածածինը փառաբանած ու գովերգած էր Աստուծոյ ողորմութիւնը իր ազգականին՝ Եղիսաբէթի այցելութեան ատեն. «Անոր ողորմութիւնը սերունդէ սերունդ կը տարածուի իր երկիւղածներուն վրայ» (Ղուկաս 1, 5): Սուրբ Կոյսը, Գաբրիէլ հրեշտակապետին աւետումնէն զիտէր, թէ աշխարհին պիտի ընծայէր Ան, որ պիտի իրականացնէր Աստուծոյ կատարուած խոստումը Աբրահամին: «Պիտի չղանաս եւ պիտի ծնանիս որդի մը եւ պիտի կոչես

Շաբ.ք էջ 18

ԴԱՍԵՐ՝ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏՍՈՒԹԵՆԵՆ

Ս. Ծնունդի պատմութիւնը աշխարհի ամէնէն հրաշալի պատմութիւնն է: Տէր տէրանց, Արքայ արքայից եւ մարդկութեան Փրկիչ եղող Յիսուս Քրիստոսի Ծնունդը՝ Բեթղեհէմի փոքրիկ աւանին մէջ բոլոր ժամանակներու մեծագոյն դէպքն է: Անցնող շուրջ երկու հազար տարիներուն ընթացքին պատահած բոլոր նշանակալից եւ կարկառուն անցուղարձերուն մէջ եզակի եւ անկրկնելի դէպք մըն է ան՝ իր նշանակութեամբ, իր մնացուն արժէքով եւ իր թողուցած ուսանելի դասերով:

Եւ դարձեալ՝ պատանեկան հոգիին մէջ դրոշմուած այդ օրերու դիտած ժապաւէնի պատկերներէն: Լիբանանցի ժողովուրդին ապրած ողբերգութիւնը: Օսմանեան բանակին պարտադրած շրջափակումը՝ արգիլելով ցորենի մատակարարումը: Ժողովուրդին անօթութիւնն ու տեղահանութիւնը: Աշխատանքային ճամբարները: Ու փախչող լիբանանցի երիտասարդներու սպանութիւնը: «Սեֆերպելիք»-ը կը ներկայացուէր իր իսկական ապրուած բնութագրումով: Բայց կար նաեւ այդ վիճակին մէջ ժողովուրդին ապրելու վճռակամութիւնը: Երիտասարդ-երիտասարդուհիին սէրը, գիրար գօտեպնդելու եւ իրարու աջակցիլն ու, տակաւին, հողին կապուածութիւնը: Եւ այս բոլոր զգացումներուն մէջէն դուրս կը ժայթքէին դիմադրութիւնը, թուրքին դէմ կռիւն ու պայքարը: Ժապաւէնը մէկ իրադարձութիւնը միւսին շարժապատկերով, շատ պարզ ու սահուն ընթացքով կը տանէր մեզ դէպի պատմութեան տարբեր հոլովոյթները: Մենք՝ հանդիսատեսներս, կը դիտէինք ոչ միայն ժապաւէնը, այլ՝



ապրուած իրական պատմութիւնը եւ կեանքը, որոնց ընդմէջէն աւելի կը սիրէինք Լիբանանը ու ամուր կը կառչէինք իրաւունքին եւ ազատութեան:

Ու դարձեալ՝ հօրեղբօրս յուշերուն մէջէն:

«1918: Զօրավար Ալեքսիի բանակը գրաւած էր Հալէպը: Թուրքն ու գերմանացին վտարուած էին: Յանկարծ կայծակնային լուրը տարածուեցաւ քաղաքին մէջ: Իրենց լեռներէն իջած եւ Հալէպ հասած էին Արամ պէյ Չոլազեանը եւ Թոփալ Յակոբին գլխաւորած քաջարի մարտիկներու խումբը՝ մօտ երեսուն հոգի: Գացի դիտելու հայ գինուորները: Չորս տարուան նուաստացուցիչ երեւոյթներէ ետք, հոգեպարար անգուզական տեսարան մըն էր: Իւրաքանչիւր քաջարի գինեալը: Կ'ուռեցնէին ընկճուած հայու կուրծքը: Տեղացիներ, որոնք հայը տեսած էին որպէս տարագիր, կու գային ապշահար դիտելու դիւցազնական այս երեւոյթը: Հայ լուսանկարիչներ շտապեցին գանոնք նկարել: Այդ նկարներէն շատեր կորած են այժմ: Բայց անկորնչելի միակ այս պատկերը պիտի մնար արձանագրուած մանկուսակ հոգուցս մէջ:

Եւ «Սեֆերպելիք» ժապաւէնին մէջ կար նաեւ հիմնական պատկեր մը, որ պիտի մնար նաեւ արձանագրուած պատանեկան հոգուցս մէջ: Լիբանանցի քաջ մարտիկները, հերոսական պայքարէ ետք, ստիպուած էին ծովու ճամբով լքել երկիրը որոշ ժամանակի մը համար: Ապտոն նաւուն մէջէն բարձրաձայն կը կանչէ գինեք հեռուէն դիտող նշանածը: «Մատանին ամուր պահէ քու մատիդ վրայ: Դուս մնայ

Շար.ը էջ 15

**ՇՆՈՐՀԱՒՈՐ
ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԿԱՐՕ ԵՒ ՍՈՆԱ
ԼԱՉԻՆԵԱՆ**

ԱՐԱՐԱՏ ԿՈՆԵԱԿՆ ՈՒ ՈՒԻՆՍԹՈՆ ՉԸՐՉԻԼԸ

«ՓԱՅՓԱՅԷ ԵՐԱԶՆԵՐԴ, ԲԱՅՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԻ ԱՆՏԵՍԵՐ՝»
ՈՒԻՆՍԹՈՆ ՉԵՐՉԻԼ

ԱՍՏՆՈՒՐ ԿԻԻՋԵԼԵԱՆ

Հոկտեմբեր 29ին Լոնտոնի Սոթսթրիտ հանրաճանաթ ընկերութիւնը Մոնաքոյի Արքայազն Ալպերի իշխանի հովանաւորութեամբ եւ մասնակցութեամբ կազմակերպած էր աճուրդ՝ նուիրուած Ուինսթոն Չըրչի ընկերութեան 50 ամեակին: Աճուրդի գլխաւոր կազմակերպիչներն էին Արքայազն Ալպերը, Միացեալ Թագաւորութեան Մոնաքոյի դեսպան Էվելին Կոնտան եւ Միացեալ Թագաւորութեան Հայաստանի Հանրապետութեան դեսպան Արմէն Սարգիսեանը: Հանգանակուած ամբողջ դրամը յատկացուեցաւ իշխան Ալպերի բարեսիրական նախաձեռնութիւններուն, ինչպէս՝ կլիմայական փոփոխութիւններուն ազդեցութեան նուազեցում, պիտ-բազմազանութեան պահպանում եւ անապատացման դէմ պայքար:



Մառախլապատ Ալբիոնի մէջ հայկական կոնեակի այս աննախընթաց յաջողութիւնը, յոյս ունինք, կը նպաստէ «Արարատ» վաճառանի չի համբաւի տարածման:

Չըրչի ե՞րբ եւ ո՞ւր առաջին անգամ խմած է «Արարատ» հայկական կոնեակը:

Տիկինս, Վիվիէնը եւ ես երկար տարիներ, դեռ եօթանասունական թուականներու սկիզբէն, վաչելած ենք Չըրչի ղստեր, Սարալի բարեկամութիւնը: Երբ ան առաջին անգամ ընթրիքի հրաւիրուած էր մեր տունը, հիւրասենեակին մէջ, դաշնամուրի վրայ նկատեց «Արարատ» մակնիշով կոնեակը: Ապշահար նայեցաւ շիշին եւ ըսաւ. «1945ին մինչեւ իր մահը՝ հայրս այս կոնեակը կը խմէր»:

Սարան ապա պատմեց թէ Չըրչիը ե՞րբ եւ ո՞ւր առաջին անգամ խմած էր «Արարատ» կոնեակը:

1945 Փետրուարին, Եալթայի Քոնֆերանսի ժամանակ, ընթրիքէն յետոյ Ստալին կը հարցնէ Չըրչիին թէ որեւէ ոգելից ըմպելի կը փափաքի՞ խմել: «Սիկարի հետ սովորութիւն ունիմ կոնեակ խմելու», կը պատասխանէ Անգլիոյ վարչապետը:

Չըրչիին կը հրամցնեն լաւագոյն հայկական կոնեակը, «Արարատ»ը: Չըրչիը «կը սիրահարի»

հայկական կոնեակին վրայ եւ կը հարցնէ իր հիւրընկալին. «Ուրկէ՞ կրնամ քանի մը շիշ գնել այս կոնեակէն»:

Միացեալ Թագաւորութեան Խորհրդային Միութեան դեսպանութիւնը ամէն ամիս սնտուկ մը (12 շիշ) կոնեակ կը ղրկէ Չըրչիին տունը, Ստալինի կարգադրութեամբ:

«Հայրս մահացաւ, կ'ըսէ Սարան, բայց մենք շարունակեցինք սնտուկ մը նոյն հայկական կոնեակէն ստանալ ամէն ամիս: Տարիներ

անց՝ պաշտօնեաներէն մէկը կ'անդրադառնայ որ դեսպանութիւնը ամբողջ տասնամեակ մը մահացած Չըրչիին կոնեակ ղրկած է...: Դժբախտաբար այդ օրէն մեր հայկական կոնեակի աղբիւրը ցամքեցաւ...: Ի միջի այլոց, աւելցուց Սարան, ես ալ հօրս չափ կը սիրէի «Արարատ» հայկական կոնեակը»: Յաւարտ ընթրիքի, կոնեակէն «այրի» «Արարատ» մակնիշով դատարկ շիշ մը միայն մնացած էր սեղանին վրայ...:

ՇԱՍԼԵԱՆ ԹԱԹԻԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Շարունակուած էջ 13-էն

րու ընթացքին կրցած է նիւթապէս եւ բարոյապէս նեցուկ կանգնիլ վարժարանիս, որը կարիքը ունի մեր բոլորին օժանդակութեան, նկատի առած որ ան կը դիմագրաւէ տնտեսական ծանր պայմաններ:

Ապա, Պրն. Հանէսեան բեմ հրաւիրեց Տօքթ. Նազարէթ Տարագճեանը՝ Հայ Աւետարանչական Միութեան նախագահը, որ պատուուեցաւ յուշանուէրով մը, մեր վարժարանին հանդէպ իր ցուցաբերած յարատեւ օժանդակութեան համար: Տօքթ. Տարագճեան իր կարգին փոխանցեց իր սրտին խօսքը, շեշտելով անհրաժեշտութիւնը մեր անմիջական օժանդակութեան Միջին Արեւելքի գաղութներէն ներս գործող մեր կրթական օժանդակութիւններուն, որոնք տնտեսական դժուար պայմաններուն մէջ կը փորձեն գոյատեւել եւ յաղթահարել

ամէն դժուարութիւն որ կը ծառանայ իրենց դիմաց:

Նման ձեռնարկի մը նպատակը դրամահաւաք ըլլալու կողքին, կը միտի շրջանաւարտները համախմբելով ընկերային մթնոլորտ ստեղծել, գիրար միացնել տարիներէ իրարմէ հեռացած դասընկեր-դասընկերուհիներ հաւաքել եւ մէկտեղել, անմոռանալի յիշատակներ փոխանակել ու վերջիշել: Յոյսով ենք, որ մեր շրջանաւարտները հաճելի երեկոյ մը անցուցին եւ դարձեալ կը տեսնուինք մեր յաջորդ ձեռնարկներուն ընթացքին:

Աստուծոյ փառք կու տանք, որ այս ձեռնարկին յաջողութիւնը շնորհեց մեզի եւ աւելիով վարձատրէ մեր բոլոր նուիրատուները: Նուիրատուութիւն առաքողները կրնան իրենց տուրքէ գերծ օժանդակութիւնները ուղարկել հետեւեալ հասցէին STAA 2592 Calle De Villada Circle, CA 91010:

ՅԵՐՈՍՆԵՐՈՒՆ ԿԱՆՉԸ. «ՍԵՖԵՐՊԵՐԼԻՔ»

Շարունակուած էջ 14-էն

հոս: Ես կ'երթամ հիմա, բայց շուտով պիտի վերադառնամ: Այս մեր հողն է, եւ մենք հոս պիտի ապրինք մեր ազատութեան մէջ:

2015 տարին եղաւ «լեցուն»: Յեղասպանութեան հարիւրամեակի ոգեկոչումները մեր հոգիներուն մէջ արձանագրեցին անկորնչելի պատկերներ: Պատկերներ, որոնք եթէ երէկ ապրուած իրական կեանքեր էին, բայց այսօր դարձեալ վերապրեցան: Կեանքեր, որոնք կերտուած էին (ու տակաւին շարունակուող) մէկ կողմէ նահատակութեամբ, բայց նաեւ՝ հերոսներու քաջարի դիմադրողականութեամբ: Եւ այդ բոլոր հերոսները, նահատակ թէ քաջամարտիկ, տեսանելի թէ ոչ՝ պատկերով եւ կամ այլ,

այսօր տակաւին հեռուէն բարձրաձայն կը կանչեն մեզ, կը բաժնեն իրենց սէրը մեզի հետ եւ՝ հողին. «Այս մեր հողն է, եւ մենք հոս պիտի ապրինք»:

Եթէ այս տարի մեր նահատակները եւ հերոսները կը չիշենք, նաեւ յառաջիկային պիտի շարունակենք չիշել, եթէ պահանջեցինք, պիտի շարունակենք պահանջել, որովհետեւ «Յիշել ու պահանջել»-ը ժամկէտի սահմանափակում չունի, որովհետեւ «Յիշել ու պահանջել»-ը հայուն «Սեֆերպերլիք»-ն է, ոչ թէ բռնի տեղահանութեան, այլ՝ ինքնութեան գորակոչի, հայուն կեանքին, իրաւունքին եւ հողին:

Հերոսներուն կանչը, հայուն «Սեֆերպերլիք»-ը, հարիւրամեակ ու տակաւին, նոր եւ նորոգուող մարտահրաւէր:

ՈՒՒՆԻՆ ԴԱՐՁԱԲ ՊՐԵՍՅԵՐ ԼԻԳԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԼԱԲԱԳՈՅՆ ՈՄԲԱՐԿՈՒՆ

«Մանչեսթեր Յունայթեդի» յարձակուող Ուէյն Ռունին, յունուարի 2-ին յաղթական գոլի հեղինակ դառնալով «Սուոնսիի» դէմ խաղում, անգլիական Պրէմիեր լիգայում իր գոլերի քանակը հասցրել է 188-ի, փոխանցում է Daily Mail-ը:



Անգլիայի հաւաքականի աւագը մէկ գոլով շրջանցեց «Մանչեսթեր Յունայթեդի» նախկին յարձակուող էնդի Բոուլին եւ դարձաւ Պրէմիեր լիգայի պատմութեան երկրորդ լաւագոյն ռմբարկու: Ռունին գերազանցում է միայն անգլիացի յարձակուող Ալան Շիրերը, որն Պրէմիեր լիգայում անցկացրած 441 խաղերում դարձել է 260 գոլի հեղինակ:

ՄԻՒԱՅԵԼ ՅՈՐԿ. ՈՒՆԵՆՔ ԴԵՆՐԻՆ ՄԽԻԹԱՐԵԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՅՍՏԱԿ ԾՐԱԳԻՐ

Դորտմունդի «Բորուսիան» մտադիր է երկարաձգել Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանի հետ գործող պայմանագիրը: Վերջերս Մխիթարեանի գործակալ Մինո Ռայոլան յայտարարել էր, որ 26-ամեայ ֆուտպոլիստի՝ Թուրինի «Յուվետուս» տեղափոխուելու հաւանականութիւնը 50 տոկոս է, սակայն «Բորուսիայի» գործադիր տնօրէն Միխայիլ Յորկը մեկնաբանել է այդ լուրերը:

«Եթէ հաւատալի բոլոր խօսակցութիւններին, ապա մեր թիմի կազմը վաղուց վաճառուած կը լինէր: Մենք ունենք Հենրիխ Մխիթարեանի պայմանագիրը երկարաձգելու յստակ ծրագիր», - Յորկի խօսքը մէջբերում է Bild-ը:

Յիշեցնենք, որ «Բորուսիայի» հետ Հենրիխ Մխիթարեանի գործող պայմանագիրը նախատեսուած է մինչեւ 2017-ի ամառը: Այս մրցաշրջանում կիսապաշտպանը գերմանական ակումբի կազմում մասնակցել է 28 պաշտօնական խաղերի, որոնցում դարձել է 15 գոլի եւ 19 կոլային փոխանցման հեղինակ:

ՖԻՖԱ-Ի ՆԱԽԱԳԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԿԻՍԵԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Ֆուտպոլի միջազգային ֆեդերացիայի (ՖԻՖԱ) նախագահի թեկնածու, շէյխ Սալման բին Իբրահիմ Ալ Խալիֆան առաջարկում է կազմակերպութիւնը կիսել երկու անկախ հատուածներ, որպէսզի վերադարձուի վստահութիւնը համաշխարհային ֆուտբոլի ղեկավար մարմնի նկատմամբ:



Ասիայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի պաշտօնը զբաղեցնող շէյխ Սալմանն առաջարկում է առանձնացնել կառավարման մարմինը ֆուտպոլային հարցերով զբաղուող ստորաբաժանումներից: Ֆինանսական հոսքերով զբաղուող մարմինը կը լինի առանձին եւ կը վերահսկուի միւս մասի կողմից:

«Միայն տարանջատելով ֆինանսաւորման ներգրաւման եւ բաշխման գործընթացները՝ հնարաւոր կը լինի վերածնել ՖԻՖԱ-ն եւ վերականգնել հեղինակութիւնը», - շէյխ Սալմանի խօսքը մէջբերում է Reuters-ը:

ՖԻՖԱ-ի նախագահի արտահերթ ընտրութիւնը փետրուարի 26-ին է:

ՄԻՅՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԸ ՊԱՔԻՈՒՄ ԲԱՐՁՐԱՑՐԵՑ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԴՐՕՇԸ

Յունահռոմէական ոճի ըմբշամարտի Հայաստանի հաւաքականի առաջատարներից Միհրան Յարութիւնեանը Պաքուում անցկացուած առաջին Եւրոպական խաղերում դարձաւ փոխ-ախոյեան: Միհրանը հիանալի հանդէս եկաւ նաեւ Լաս Վեկասում կայացած աշխարհի առաջնութիւնում, սակայն մրցավարական խայտառակ կողմնակալութեան պատճառով գրաւեց ընդամէնը 5-րդ տեղը՝ նուաճելով օլիմպիական ուղեգիր:

ՀԱԼԷՊԻ ՎԵՐԺԻՆ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՄԱՅՐԱՆՈՅԸ

Շարունակուած էջ 8-էն
վերընդունի մայրերը իր հիւանդանոցէն ներս:
Կիւլպէնկեան Մայրանոցի վերաբացումը յոյս, անվտանգութիւն, կայունութիւն եւ աշխատավայր կը հայթայթէ Հալեպի բնակիչներուն:
Շուտով հալեպահայութեան ուշադրութեան պիտի յանձնուի նոր գարգացումները վերժին Կիւլ-

պէնկեան Մայրանոցին հետ կապուած: Մինչ այդ, Կիւլպէնկեան Հաստատութիւնը Շնորհաւոր Նոր Տարի եւ մնայուն խաղաղութիւն կը մաղթէ Սուրիական Հանրապետութեան եւ հալեպահայութեան:
Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութիւնը Կը Ձգտի Ստեղծել Խաղաղ Ովասիս մը Զինեալ Պայքարի Անապատի Մէջ

ՏԱՐՈՒԱՅ ԳԼԵԱԴՈՐ ՄԱՐԶԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ

2015 թուականը հարուստ էր մարզական իրադարձութիւններով ինչպէս ամբողջ աշխարհում, այնպէս էլ Հայաստանում: NEWS.am Sport-ն առանձնացրել է անցնող տարուայ 10 գլխաւոր իրադարձութիւնները հայկական եւ համաշխարհային ոլորտում:

Հայաստանի հաւաքականի ձախողումը Եւրո-2016-ի ընտրական փուլում եւ սրբակիցները ԱԱ-2018-ում

Ֆուտպոլի Հայաստանի հաւաքականը հիասթափեցրեց Եւրո-2016-ի ընտրական փուլում եւ առանց յաղթանակի I խմբում գրաւեց վերջին տեղը: Ազգային թիմի գլխաւոր մարզիչի պաշտօնում ընտրական փուլի ընթացքում շուէյցարացի մասնագէտ Բեռնար Շալանդին փոխարինեց Սարգիս Յովսէփեանը, որը եւս հարգարարեց սպասելիքները: Ռուսաստանում կայանալիք աշխարհի 2018թ. առաջնութեան ընտրական փուլում Հայաստանի հաւաքականը հանդէս կը գայ Երեւանի «Արարատում» աշխատող վարուժան Սուքիասեանի գլխաւորութեամբ, իսկ մրցակիցները կը լինեն Ռումինիան, Դանիան, Լեհաստանը, Չեռնոգորիան ու Ղազախստանը: Զարմանալի չէ, որ ՖԻՖԱ-ի դասակարգման աղիւսակում Հայաստանի հաւաքականը տարին աւարտեց 123-րդ տեղում:

Արթուր Ալեքսանեանը երկրորդ անգամ հռչակուեց աշխարհի ախոյեան

յունահռոմէական ոճի ըմբշամարտի Օլիմպիական խաղերի պրոնզէ մեդալակիր Արթուր Ալեքսանեանը դարձաւ աշխարհի կրկնակի ախոյեան: Լաս Վեգասում կայացած աշխարհի առաջնութիւնում գիւմրեցի ըմբիշը պայքարից դուրս էր 98 կգ քաշային կարգում եւ վստահ քայլերով գնում էր դէպի օլիմպիական ոսկին:

Հենրիխ Մխիթարեանի վերադարձը

Հայաստանի հաւաքականի եւ Դորտմունդի «Բորուսիայի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանն անցկացնում է կարիերայի լաւագոյն մրցաշրջանը: 26-ամեայ ֆուտպոլիստը դարձել է գերմանական ակումբի առաջատարներից մէկը եւ բարձր գնահատականի է արժանանում եւրոպական մամուլի կողմից: Այս տարի Հենրիխը, Էրեւի, հայկական ֆուտբոլի միակ լուսաւոր կողմն էր:

ԼԵՆՈՆ ԱՐՈՆԵԱՆԻ յաղթանակը Սինքֆիլդի մրցաշարում եւ մեդալները աշխարհի ու Եւրոպայի թիմային առաջնութիւններում

Տարին վատը չէր նաեւ հայկական շախմատի առաջատար ԼԵՆՈՆ Արոնեանի համար: Ամերիկեան Սենթ Լուիսում կայացած Sinquefeld Cup շախմատային սուպերմրցաշարի յաղթողի տիտղոսը նուաճելուց յետոյ հայ գրոսմայստերը Հայաստանի հաւաքականին օգնեց նուաճել 2 մեդալ: Ծաղկաձորում կայացած աշխարհի թիմային առաջնութիւնում հայկական թիմը գրաւեց երրորդ տեղը, իսկ Ռեյկեալիկում անցկացուած Եւրոպայի թիմային առաջնութիւնում նուաճեց արծաթէ մետալ: Ծաղկաձորում ԼԵՆՈՆ Արոնեանը ոսկէ մետալ նուաճեց առաջին խաղատախտակի վրայ, իսկ Իսլանդիայի մայրաքաղաքում արժանացաւ արծաթէ մետալի: ՖԻԴԵ-ի դասակարգման աղիւսակում Արոնեանը տարին աւարտեց 4-րդ տեղում:

Արթուր Արրահանը երեք անգամ պաշտպանեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը

35-ամեայ Արթուր Աբրահամը 3 անգամ պաշտպանեց պրոֆեսիոնալ բռնցքամարտի սուպերմիջին քաշային կարգում WBO վարկածով աշխարհի ախոյեանի տիտղոսը՝ յաղթելով բրիտանացի Փոլ Սմիթին, գերմանացի Ռոբերտ Շտիպլիցին ու բրիտանացի Մարտին Մարէչին:

ՄՈՒՐԻՆՅՈՆ ԿԱՐՈՂ Է ԳԼՃԱՎՈՐԵԼ ԱՆԳԼԻԱՅԻ ԽԱՎՔԱԿԱՆՐ

Լոնտոնի «Չելսիի» գլխաւոր մարզիչի պաշտօնից հեռացուած Ժոզէ Մուրիլինեն Եւրո-2016-ից յետոյ կարող է գլխաւորել ֆուտպոլի Անգլիայի ազգային հաւաքականը, գրում է Daily Mirror-ը:

Պորտուգալացի մասնագէտն իր գործակալին յայտնել է, որ պատրաստ է աշխատանքի անցնել ազգային թիմում, եթէ այդ ժամանակ լինի գործազուրկ: Մուրիլինեոյի ծառայութիւններով հետաքրքրուած է «Մանչեսթեր Յունայթեդը», որը մտածում է Լուի վան Գալին հեռացնելու մասին:

Յիշեցնենք, որ 2016-ի ամրանը կայանալիք Եւրոպայի առաջնութեան խմբային փուլում անգլիացիները խաղալու են Ռուսաստանի, Ուելսի եւ Սլովակիայի հաւաքականների հետ:

OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Դետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

ԽՈՅ Մարտ 21-Ապրիլ 19
Տարբեր վայրերում մեջ տարբեր պատմություններ պիտի լսեն որոնցմով շատ պիտի մզահոգուիս, բնաւ տեղի մի տար այդպիսի լուրերու: Շատ լաւ հասկցած ես հեզութեան կարեւորութիւնը եւ յաճախ համեստութեամբ կը վարուիս շուրջիցներուդ հետ: Գործերդ մի ձգձգեր:
Բախտաւոր թիւերդ են: 9,17,22,28,35

ՅՈՒԼ Ապրիլ 20-Մայիս 20
Ամբողջ կեանքիդ ընթացքին հաւատարմօրէն նուիրուած ես ընտանիքիդ՝ առանց փոխարէնը ակնկալելու, ժամանակն է որ դուն քեզի նայիս: Կարգ մը հարցեր կրնաս լուծել միայն դրական պատասխաններ տալով: Կարճ պտոյտի մը պիտոք ունիս ինքզինքդ սփոփելու համար:
Բախտաւոր թիւերդ են: 6,14,19,25,30

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ Մայիս 21-Յունիս 20
Պէտք է լաւ գիտնաս թէ կեանքդ ինչ ձեւով պիտի ապրիս: Ժամանակդ մի վատնէր այլ շահարկէ գայն: Խօսքերդ գործնականի դարձուր եւ իրագործէ գաճոճը: Կեանակիցիդ կարիքները քուկիմէդ առաջ նկատելու եւ անձնուրած եղիր: Շուտով մի յուսահատիր:
Բախտաւոր թիւերդ են: 10,15,21,29,33

ԽԵՅԳԵՏԻՆ Յունիս 21-Յուլիս 22
Մեծ անփոխի մը մէջ պիտի գտնուիս եւ ինքզինքդ շատ տկար պիտի զգաս խորհելով թէ աւելո՞ղ է ներկայութիւնդ: Գործիդ մէջ շատ սահմանաբաւ ժամանակ պիտի ունենաս ծրագրիդ ամբողջացնելու, արագ շարժելու ես: Աւելի արժէք տալու ես զաւակներուդ եւ լաւ դաստիարակես գաճոճը:
Բախտաւոր թիւերդ են: 1,11,25,34,36

ԱՌԻԻԾ Յուլիս 23-Օգոստոս 22
Մարդոց սխալները աննկատ չես կրնար թողուլ եւ միշտ կը յանդիմանես գաճոճը: Քիչ մը աւելի փափկանկատ ըլլալու ես եւ աւելի ազնուութեամբ վարուիս անոնց հետ: Կեանքի սպառնացող պայմանները կը տիրապետեն վրադ, յիշէ թէ քեզի շատ նեցուկ կեցողներ ունիս:
Բախտաւոր թիւերդ են: 2,5,8,22,34

ԿՈՅՍ Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
Գոհունակ սիրտ մը ունենալուդ համար շատ սիրուած ես բոլորի կողմէ: Գործի մէջ մեծ անակնկալ մը նոր ընտրութիւններու դիմաց պիտի դնէ քեզ: Անձկանօք անձի մը վերադարձին կը սպասես, որու երկար ժամանակէ ի վեր չես տեսած: Շատ հետաքրքիր մի ըլլար:
Բախտաւոր թիւերդ են: 7,14,23,26,27

ԿՇԻՈՔ Սեպտեմբեր 23-Յոկտեմբեր 22
Ազգականներուդ հետ ունեցած հարցերուդ լուծումը շուտով պիտի գտնես եւ խաղաղութիւն պիտի բերես մէջերմիդ: Քու կեցուածքդ համընթաց թող ըլլայ գործընկերոջդ հեռանակարին եւ ծրագրներուն: Վստահութիւն ունեցիր զաւակներուդ վրայ:
Բախտաւոր թիւերդ են: 14,21,28,31,34

ԿԱՐԻԾ Յոկտեմբեր 23-Նոյեմբեր 21
Կեանքի արագընթաց փոփոխութիւնները վախ կը պատճառեն քեզի, երբէք մի վիատիր եւ մի յուսահատիր, կարողութիւններուդ վստահէ: Իւրայատուկ յանդիպումներու ներկայ գտնուելով՝ շատ մը դիւրիմացութիւններ պիտի պարզես: Մի հրաժարիր գործէդ:
Բախտաւոր թիւերդ են: 1,6,10,28,29

ԱՂԵՂՆԱԲՈՐ Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21
Գործիդ մէջ փոփոխութիւններու կարիքը կը զգաս եւ վեճի մէջ կը մտնես գործատիրոջդ հետ: Հաստատ մնայ գաղափարիդ եւ ուրուազիծիդ վրայ: Անխոհեմ արտայայտութիւններ մի ըներ բարեկամներուդ ներկայութեան, չ'ըլլայ թէ նեղուիս քեզմէ: Առողջութեանդ լաւ հոգ տար:
Բախտաւոր թիւերդ են: 9,11,27,31,32

ԱՅԾԵՂՁԻՐ Դեկտեմբեր 22-Յունուար 19
Կատարեալ վստահութիւն ունիս բարեկամներուդ վրայ եւ նկատի չես առներ կարգ մը խաբեբայութիւնները: Աչալուրջ եղիր, արթուն մնացիր եւ լաւ լսէ ամէն բան: Քաջաբար արտայայտէ գաղափարներդ եւ մի մտահոգուիր առնելիք պատասխաններդ:
Բախտաւոր թիւերդ են: 15,21,25,31,36

ԾՈՎԱՆՈՅՇ Յունուար 20-Փետրուար 18
Ձաւակներուդ կրթութիւնը ամբողջութեամբ յանձնած ես կողակիցիդ: Ինքզինքդ այնքան կը խոնարհեցնես՝ որ յօժար ես նոյնիսկ ուրիշներու յանձնաքները վրադ առնելու: Երբէք ետ մի երթար՝ այլ միշտ յառաջ նայելու եւ յառաջ գնալ:
Բախտաւոր թիւերդ են: 4,10,20,25,34

ՉՈՒԿ Փետրուար 19-Մարտ 20
Տիսփալիւնը սիրող անձ մըն ես եւ օրէնքներու հետեւելով լաւ օրինակ կը դառնաս շրջանակիդ, յատկապէս՝ զաւակներուդ: Մարդոց խօսակցութիւնները թող չնեղեն քեզ, լաւատես եղիր: Գործի առաջարկ մը կրնայ ներկայանալ քեզի շատ վաստակ ունեցող ընկերութեան մը կողմէ:
Բախտաւոր թիւերդ են: 7,15,20,28,33

ԱՆՈՐ ՈՂՈՐՍՈՒԹԻՒՆԸ ՍԵՐՈՒՆԴԷ ՍԵՐՈՒՆԴ ԿԸ ՏԱՐԱԾՈՒԻ

Շարունակուած էջ 7-էն

զինք Յիսուս: Ան մեծ պիտի ըլլայ եւ պիտի կոչուի Որդի Բարձրեալի» (Ղուկաս 1, 31-32): Յովհաննէս Մկրտիչի հայրը՝ Զաքարիան, կ'արձագանգէ Աստուածածնայ Մեծացուցէին իր մարգարէութեամբ՝ ըսելով. «Մեր Աստուծոյ զթառառ բարութեամբ ի վերուստ մեզի պիտի այցելէ ծագող արեգակը, լուսաւորելու համար անոնք, որոնք նստած են մահուան ստուերին եւ խաւարին մէջ, ուղղելու համար մեր քայլերը խաղաղութեան ճանապարհին վրայ» (Ղուկաս 1, 78-79):

Բեթղէհէմի մտուրին մէջ զեւտեղուած Մանուկ Յիսուսն է ծագող արեգակը, որ ի վերուստ մեզ կ'այցելէ եւ համայն մարդկութեան մէջ կը սփռէ Հօր Աստուծոյ ողորմութեան ջերմութիւնը: Ինչպէս երկու հազար տարիներ առաջ, այսօր եւս Անոր կարեկցող եւ զթառառ ողորմութեան կը կազդուրուին տկարներն ու հարստահարուածները: Յատուկ կերպով՝ Անոր անսահման եւ առատաբուրդ ողորմութեան ապաւինելով է որ կը զղջան ու դարձի կու գան մեղաւորները, որոնք սառն խտասրտութեամբ խեղդած էին իրենց խիղճերը եւ փակած իրենց սրտերուն դռները խեղճին ու կարիքաւորին դիմաց:

Յիսուսի ողորմածութիւնն է, որ հրաշագործեց սրտին դարձը մեծահարուստ մաքսապետ Զակէյնոսի, որ

իր հարստութեան կէսը աղքատներուն տուաւ եւ քառասպատիկ հատուցանեց բոլոր անոնց, զորս ինք անիրաւած էր (Ղուկաս 19, 1-10):

Յիսուս, իր բարեգլխութեամբ բուժեց ուղեկորոյս սամարացի կնոջ սիրտը, որ զղջալով իր անցեալի կեանքին վրայ՝ դարձի եկաւ եւ եղաւ առաքեալ Աւետարանի (Յովհաննէս 4, 1-42): Ան՝ իր անսահման ողորմութեամբ, չափտեսական կեանքի անասան յոյսով ներեց ու ամբապնդեց աշակողմեան աւագակին, որ կեանքի վերջին պահուն վստահութեամբ ապաւինեցաւ Յիսուսի եւ խնդրեց, որ յիշուի արքայութեան մէջ (Ղուկաս 23, 39-43):

Սիրելի քոյրեր եւ եղբայրներ ի Քրիստոս,

Մաղթանքս է, որ Աստուածային ողորմութեան այս յոբելեանական սուրբ տարուան Մննդեան Տօնին՝ լայն բանասք մեր սրտերուն դռները Մանուկ Յիսուսին դիմաց, որպէսզի Անոր սէրը, ողորմութիւնը եւ խաղաղազուրկները ներթափանցեն մեր մէջ ու Անոր հոգին մաքրէ ու սրբէ մեր խիղճերը մեղքի ամէն արատէ ու բիծէ եւ դարձնէ մեզ «Ողորմած Երկնաւոր Հօր նման»:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ Զեզի մեզի մեծ աւետիս:

ՄԻՔԱՅԷԼ ԵՊՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆ՝ Առաջնորդ Տիրամայր Նարեկի Հայ Կաթողիկէ Թեմին

ԴԱՍԵՐ՝ Ա. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ

Շարունակուած էջ 7-էն

պատմութիւնը Բեթղէհէմի հովիւներուն իրենց ունեցած փորձառութիւնը ուրիշներու հետ բաժնելու պատմութիւնն է: Անոնք առաջիններն էին ստանալու Աստուծոյ հրեշտակին բերած աւետիսը: Աճապարանքով Բեթղէհէմ գացին եւ գտան Նորածին Մեսիան: Իրենց փառաբանութիւնը ընելէ ետք, անոնք վկայեցին ինչ որ լսած եւ տեսած էին: Անոնց համար անհնար էր տեսնել եւ չվկայել Յիսուս Փրկիչը: Այդ պատճառով էր որ Բեթղէհէմի հովիւները առաջին կենդանի վկաները եղան նորածին Մանկիկին եւ Անոր Ծննդեան աւետիսը տարածելու:

Այն օրէն ի վեր, դարերու ընթացքին, անոնք որոնք հոգեւոր փորձառութեամբ հանդիպած են Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի՝ առանձնաշնորհումն ու հոգեւոր պարտաւորութիւնը զգացած են իրենց փորձառութիւնը բաժնելու ուրիշներու հետ: Այսօր ալ պարագան նոյնն է: Կարելի չէ ճանչնալ Յիսուս Քրիստոսը իբրեւ Տէր եւ Փրկիչ եւ լուռ մնալ եւ չվկայել իրեն մասին:

Երբորդ. Սուրբ Ծննդեան պատմութիւնը Աստուածային եւ մարդկային ընծաներու նուիրման պատմութիւնն է: Մատթէոսի Աւետարանը կը յիշէ, թէ Յիսուսի Ծննդեան ատեն Արեւելքէն մոզեր՝ տեսնելով Անոր աստղը մինչեւ Բեթղէհէմ եկան իրենց յարգանքի սուրբը ընծայելու Նորածին Արքային: Երբ տեսան զայն, մեծապէս ուրախացան, երկրպագեցին Անոր ու «բանալով իրենց զանձերը մատուցանեցին Անոր ընծաներ-ոսկի, կնդրուկ եւ զմուռ» (Մատթ. 2,11): Ծնունդի ոգին տալու ոգին է: Մոզեր՝ իրենց նուէրները տուին:

Բայց ամէնէն առաջ եւ ամէնէն աւելին, Աստուած ինք տուաւ իր ամենաթանկարժէք նուէրը, իր Միածին Որդին, մեղաւոր մարդկութեան փրկութեան համար, որպէսզի անոնք «կեանք ունենան եւ ալ աւելի կեանք»:

Աստուած, մեր Երկնաւոր Հայրը, մեզի կը պատուիրէ, որ մենք ալ առ ի երախտագիտութիւն իր՝ մեզի հանդէպ ունեցած սիրոյն, տալու ենք իրեն, եւ իր անունով մեր նմաններուն: Տալու ենք մեր ժամանակէն, տաղանդներէն եւ դրամէն: Տալու ենք առատաձեռնօրէն եւ սիրայօժար:

Ծննդեան այս օրհնեալ օրերուն յատկապէս սիրոյ պարտք է մեզի յիշել մեր սիրելի հայրենակիցները Սուրբի մէջ, որոնք մեր աղօթքներուն եւ նիւթական օժանդակութեան պէտք ունին:

Ս. Ծննդեան պատմութիւնը մեր օրացոյցներու վրայ ստակ թուական մը չէ եւ ոչ ալ լոկ գեղեցիկ պատմական յիշատակ մը, այլ կենսատու իրականութիւն մը՝ իր մշտա-նորոգ պատգամներով: Երբ ընկալուէ սրտերով ընդունինք Աստուծոյ Գերագոյն Պարգեւը, Յիսուս Քրիստոս, այն ատեն պիտի սորվինք լիիրաւ կերպով սիրել մեր Արարիչը եւ իր միւս արարածները, յայն-ժամ Բեթղէհէմի հովիւներուն նման, պիտի բաժնենք մեր ուրախ փորձառութիւնը ուրիշներու հետ որպէս կենդանի վկաներ, եւ հուսկ մեր նիւթական, մտային եւ հոգեւոր պարգեւները պիտի ընծայենք իրեն եւ մեր նմաններուն: Այն ատեն արդարօրէն պիտի կարենանք ըսել, «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ. ձեզի, մեզի մեծ աւետիս»:

ՎԵՐ. ԴՈՎՏ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ Գործադիր Տնօրէն Հայ Աւետ. Համաշխարհային Խորհուրդի

ՄԱՅԱԶԳ




ԱԶԱՏՈՒՀԻ ԶԱՏԻԿԵԱՆ ԿԻՒՏԷՇԵԱՆ (1921-2016)

Խոր ցաւով կը գուժենք մեր մօր եւ հարազատին ԱԶԱՏՈՒՀԻ ԶԱՏԻԿԵԱՆ ԿԻՒՏԷՇԵԱՆի մահը որ պատահեցաւ Շաբաթ, 2 Յունուար 2016ին յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ, 8 Յունուար, 2016, կ.ե. ժամը 1:00ին Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ (2215 E. Colorado Blvd, Pasadena), իսկ թաղման արարողութիւնը տեղի պիտի ունենայ Հոլիվուտի Forest Lawn գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝ Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Սօսի Սաղրեան եւ զաւակներ (Քանատա) Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Մարօ Եագուպեան եւ զաւակները (Լաս Վեկաս) Տէր եւ Տիկ. Մկրտիչ եւ Սիրուն Թորոսեան եւ զաւակները (Քանատա) Տէր եւ Տիկ. Ճէք եւ Թագուհի Քասապ եւ զաւակները (Օտտաւա) Տէր եւ Տիկ. Շահէ եւ Սեդա Քէշիշեան եւ զաւակները (Քանատա) Տէր եւ Տիկ. Յարութիւն եւ Հուրի Կիւտէշեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Ռեպեքա Կիւտէշեան (Գոճեան) եւ զաւակները Այրի տիկին Լորիս Սաֆար Կիւտէշեան Այրի տիկին Մարի Եագուճեան (Ֆրանսա) Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Լենա Հարմանտեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Գառնիկ եւ Լորա Ապուզարեան եւ եղբօր զաւակները Յարութիւն, Կարօ եւ Ազատուհի Զատիկեան եւ զաւակները: Եւ համայն Զատիկեան, Կիւտէշեան, Թողլուճեան, Փալանճեան, Պէքմէզճեան, Սաղրեան, Եագուպեան, Քէշիշեան, Թորոսեան, Քասապ, Տէր Մովսէսեան, Howell, Durbic, Arabian, Lessman, Di-Gioacchino: A

ՄԱՅԱԶԳ



ՀԱՅԿ ՀԱՃԻՆԵԱՆ (1933-2016)

Խոր ցաւով կը գուժենք մեր հօր, մեծ հօր եւ հարազատին՝ ՀԱՅԿ ՀԱՃԻՆԵԱՆի մահը որ պատահեցաւ Երեքշաբթի Յունուար 5, 2016ին: Թաղման եկեղեցւոյ կարգը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի 13 Յունուար, 2016, առաւօտեան ժամը 10:30ին Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, (2215 East Colorado Blvd, Pasadena CA 91106), ապա թաղումը՝ Liveoak Cemetery գերեզմանատան մէջ, (200 East Duarte Road, Monrovia, CA 91016):

- Սգակիրներն են՝ Զաւակները՝ Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Տեփոյեան եւ զաւակները՝ Վահագն եւ Ռաֆֆի Տէր եւ Տիկ. Վագդէն եւ Ալիս Հաճինեան եւ զաւակը (Լիբանան) Այրի Տիկ. Հիլտա Հաճինեան եւ զաւակները՝ Միշէլ, Տանիշլ եւ Հայկ Տէր եւ Տիկ. Մկօ եւ Էլէն Փօշոյլեան (Գանատա) Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Վիքի Փօշոյլեան եւ զաւակները (Լիբանան) Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Մարօ Փօշոյլեան եւ զաւակները (Լիբանան) Օր. Անի Փօշոյլեան (Իտալիա) Տէր եւ Տիկ. Միշէլ եւ Սիլվա Ապսի եւ զաւակները (Լիբանան) եւ համայն Հաճինեան, Տեփոյեան, Փօշոյլեան, Էլ Սուրի, Եափուճեան, Թօփալեան, Բրուտեան եւ Քէշիշեան ընտանիքներ: Փոխան ծաղկեպսակի կը խնդրուի նուիրատուութիւնները կատարել «Մասիս» շաբաթաթերթին:

ԿՐՕՆԱՓՈՒՆ ԶԱՅՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ

Շարունակուած էջ 6-էն

կուսակցութեան պարբերականը եղող «Միլլի գագեթէ» օրաթերթում հանդէս եկող Մեհմեթ Շեքեթ էլզին դեռեւս 2008 թ. մարտին նշելով, թէ Թուրքիայում քրիստոնեայ արմատներով 21 դեկանների եւ ռեկտորների մեծ մասը հայկական ծագում ունի, գրում էր. «Այլեւս յայտնի է, որ մեր երկրի արեւելեան հատուածում գտնուող մի համալսարանի ղեկավարը, որը չափից դուրս թշնամանաբար է տրամադրուած իսլամի եւ մահմեդականների նկատմամբ, ունի հայկական արմատներ: Ես, որպէս մուսուլման, դէմ կը լինեմ որեւէ հայ ռեկտորի ու ղեկանի նշանակմանը, եթէ անգամ նա լինի արժանաւոր ու հմուտ մասնագէտ...»:

Նոյն էլզին այս տարուայ Յունիսի 7-ին Թուրքիայում տեղի ունեցած խորհարարական ընտրութիւններում ժողովուրդների դեմոկրատական կուսակցութեան մեծ թիւով ձայներ հաւաքելու առթիւ հանդէս եկաւ այն պնդմամբ, թէ ընտրութիւններում յաղթել են ծպտեալ հայերը: Նրա համոզմամբ՝ այդ կուսակցութիւնն իրականում քրտական է: Ըստ էլզինի՝ այն արտաքուստ քրտական թուացող, իսկ իրականում ծպտեալ հայկական կուսակցութիւն է: «Ծպտեալ հայերն օգտագործում են մահմեդական քրտերին: Այս գործից ամենամեծ վնասը սուննի մահմեդական քրտերն են կրելու», - գրում է էլզին՝ նշելով, որ նման դրութեան մէջ չյայտնուելու համար

քրտերը պէտք է զարթոնք ապրեն, գիտակցեն իրենց մահմեդական ինքնութիւնը, ճշտօրէն կատարեն պարտականութիւնները եւ թոյլ չտան, որ ուրիշներն օգտագործեն իրենց:

Թուրք մտաւորականների շրջանում կրօնափոխ հայութեան վերաբերեալ իր գիտական մօտեցումներով առանձնանում է թուրք պատմաբան, ԱՄՆ-ի Կլարկ համալսարանի պրոֆեսոր Թաներ Աքչամը: Սոյն թեմայի վերաբերեալ նաեւ օսմանեան փաստաթղթերի հասու դարձած Աքչամը 2013 թ. Օգոստոսին «Թարաֆ» օրաթերթում հրատարակուած իր յօդուածում անդրադառնում է 1915 թ. եւ ծրանից յետոյ պետութեան՝ հայերի իսլամացման գործընթացը հսկողութեան տակ վերցնելու եւ նման հայերի ազատ տեղափոխուելու իրաւունքը սահմանափակելու գործընթացին. «Կառավարութիւնը դեռեւս չի վստահում հայերին՝ չնայած նրանց կրօնափոխ լինելուն, եւ յատուկ միջոցներ է ձեռնարկում նրանց վերաբերեալ, որոշ արգելքներ սահմանում: Արգելքների ցանկը գլխաւորում է ազատ տեղափոխուելու իրաւունքը: Հաւատափոխ հայերը չեն կարողանում օգտուել այդ իրաւունքից, որը շնորհուած է միւս մահմեդականներին: Ճամբորդել կարողանալու համար պարտաւոր են լինում յատուկ թոյլտուութիւն ստանալ, բաց զա շնորհելու իրաւասութիւնը չի գտնուում տեղական իշխանաւորների ձեռքին: Թոյլտուութիւնը կարելի է ձեռք բերել միմիայն Ստամպուլից, անմիջականօրէն՝ Ներքին գործերի

նախարարութիւնից: Սակայն խնդիրը հետեւեալն է. ինչպէ՞ս պէտք է պարզել ուղեւորութեան մեկնել ցանկացողի կրօնափոխ հայ լինելը-չլինելու հարցը: Այդ խնդիրը լուծելու համար միայն մէկ ուղի կա. պէտք է հայերի անձնագրերում այնպիսի նշում անել, որը կ'օգնի հասկանալ նրանց հայ լինելը: Այդ մասին որոշում է կայացուում: Այդպիսով հնարաւոր կը լինէր կանխել մահմեդական անուն վերցրած հայերի՝ միւս մուսուլման բնակչութեան մէջ անհետ կորչելը...»:

Յեղասպանագէտ Թաներ Աքչամը՝ 2014 թ. Ստամպուլում հրատարակուած «ՀԱՅԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԻՍԼԱՄԱՅՈՒՄԸ. ԼՈՒՌԻԹԻՒՆ, ԺՆՏՈՒՄ ԵՒ ԲՈՒՆԻ ՈՒԾԱՅՈՒՄ» վերնագրով իր մենագրութեան մէջ նշում է, որ բռնի ասիմիլացիան եւս ցեղասպանութեան գործընթացի անքակտելի մասն է, եւ 1915-1918 թթ. Հայոց ցեղասպանութեան ամբողջ ընթացքում հայերի նկատմամբ նոյնպէս գործադրուել է բռնի ուժացման քաղաքականութիւնը, որն իրականացուել է 3 տարբեր ձեւերով. «Առաջինը «կամաւոր» եւ/կամ հարկադիր կրօնափոխութիւնն է: Բռնի ուժացման քաղաքականութեան երկրորդ կարեւոր հենքը 12 տարեկանից ցածր տղայ եւ աղջիկ երեխաների հանդէպ գործադրուածն է, երբ մանուկները հարկադիր կերպով մուսուլման են դարձել, ցրուել որբանոցներում եւ մահմեդականների տներում, որտեղ դաստիարակուել են՝ թուրք իսլամական մշակոյթին համապա-

տասխան: Ասիմիլացիայի երրորդ հենքը մանկամարդ աղջիկների բռնի ամուսնացումն էր մահմեդական տղամարդկանց հետ: Այս բոլոր հարցերի շուրջ կեդրոնից անընդհատ հրամաններ են յղուել շրջաններ»:

Այսպիսով, թուրք պետական գործիչների եւ հասարակական-քաղաքական կազմակերպութիւնների ներկայացուցիչների մեծ մասը կրօնափոխ հայերի խնդրին անդրադառնում է միայն ՊԿԿ-ի պէս ահաբեկչական կառուցներում նրանց ընդգրկուած լինելու դիտանկիւնից: Վերջերս շատ քաղաքական գործիչներ ու մտաւորականներ փորձել են առաջ քաշել նաեւ այս տարի խորհրդարանական ընտրութիւնների 10 տոկոս շեմը յաղթահարած ժողովուրդների դեմոկրատական կուսակցութեան՝ գաղտնի հայկական կազմակերպութիւն լինելու վարկածը՝ դրանով իսկ փորձելով խոչընդոտել նրա՝ ձայների մեծ թիւ հաւաքելուն:

Այն դէպքում, երբ մի շարք թուրք ազգայնամով մտաւորականներ շեշտում են կրօնափոխ եւ ծպտեալ հայերի՝ թուրքական պետութեան համար պոտենցիալ սպառնալիք եւ մասնատման վտանգ լինելը, սոյն թեմայով ակադեմիական ուսումնասիրութիւններ կատարած որոշ թուրք գիտնականներ խնդրին անդրադառնում են Հայոց ցեղասպանութեան գործընթացի դիտանկիւնից՝ Մեծ եղեռնի հետեւանքներից մէկը համարելով կրօնափոխ հայերին:

ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ
ՇԱՆԹ ՍԻՄՈՆԵԱՆ ԸՆԴԵԱՆԳԻՆԷ ԳԻՐԳՈՐԵԱՆ
26 Դեկտեմբեր 2015
Մեր ջերմ շնորհաւորութիւնները ամուսնացեալ զոյգին, անոնց ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Փիէն եւ Ասպետուհի Սիմոնեանին:

\$0 Down Sign & Drive Event

See Max our Armenian speaker or call his cell (818) 723-0526



Max Secretov

Complimentary Lifetime Oil Changes & Lifetime Car Washes!

New 2016 Hyundai Elantra SE Sedan
With MSRP of \$19,270 in stock



\$0 due at signing.
\$0 security deposit.

ALL IN STOCK \$199 PLUS TAX MO.

36 Month Lease On Approved Credit

All in stock at this MSRP. Closed end lease for 2016 Elantra 4dr Sdn SE AT (Model # 45432F45) available from November 3, 2015 through January 17, 2016, to well-qualified lessees approved by Hyundai Motor Finance. Higher lease rates apply for lessees with lower credit ratings. MSRP \$19,270 (includes destination, excludes tax, license, title, registration, documentation fees, options, insurance and the like). Actual net capitalized cost \$16,039.89. Cap cost reduction includes \$3,000 HMF Lease Cash and \$500 Valued Owner Coupon (Customers must be the registered owner or currently living with an immediate family member who is the registered owner of a Hyundai vehicle). Net capitalized cost includes \$595 acquisition fee. Dealer contribution may vary and could affect actual lease payment. Total monthly payments \$7812.00. Option to purchase at lease end \$10,405. Lessee is responsible for third-party fees. Third-party fees vary by state or locality. Lessee is also responsible for insurance, maintenance, repairs, \$.20 per mile over 12,000 miles/year, excess wear, and a \$400 disposition fee. Disposition fee of \$400 applies in all states except in CO, IN, IA, KS, ME, OK, SC, WI, WV, & WY, where disposition fee is subject to state law limitations. Prices plus government fees and taxes, any finance charges, any dealer document processing charge, any electronic filing charge and any emissions testing charge. No holds or deposits. All vehicles sold on a first come, first serve basis.

New 2016 Hyundai Sonata SE Sedan
With MSRP of \$22,905 in stock



\$0 due at signing.
\$0 security deposit.

ALL IN STOCK \$222 PLUS TAX MO.

36 Month Lease On Approved Credit

All in stock at this MSRP. Closed end lease for 2016 Sonata 4dr Sdn SE (Model # 28402F45) available from November 3, 2015 through January 17, 2016, to well-qualified lessees approved by Hyundai Motor Finance. Not all lessees will qualify. Higher lease rates apply for lessees with lower credit ratings. MSRP \$22,905 (includes destination, excludes tax, license, title, registration, documentation fees, options, insurance and the like). Actual net capitalized cost \$18,896.03. Cap cost reduction includes \$3,000 HMF Lease Cash, \$750 Event Cash, and \$500 Valued Owner Coupon (Customers must be the registered owner or currently living with an immediate family member who is the registered owner of a Hyundai vehicle). Net capitalized cost includes \$595 acquisition fee. Dealer contribution may vary and could affect actual lease payment. Total monthly payments \$8733.96. Option to purchase at lease end \$10,405. Lessee is responsible for third-party fees. Third-party fees vary by state or locality. Lessee is also responsible for insurance, maintenance, repairs, \$.20 per mile over 12,000 miles/year, excess wear, and a \$400 disposition fee. Disposition fee of \$400 applies in all states except in CO, IN, IA, KS, ME, OK, SC, WI, WV, & WY, where disposition fee is subject to state law limitations. Prices plus government fees and taxes, any finance charges, any dealer document processing charge, any electronic filing charge and any emissions testing charge. No holds or deposits. All vehicles sold on a first come, first serve basis.

New 2016 Hyundai Santa Fe Sport 2.4L FWD
With MSRP of \$26,500 in stock



\$0 due at signing.
\$0 security deposit.

ALL IN STOCK \$316 PLUS TAX MO.

36 Month Lease On Approved Credit

All in stock at this MSRP. Closed end lease for 2016 Santa Fe Sport 2.4L FWD (Model # 63402F45) available from November 3, 2015 through January 17, 2016, to well-qualified lessees approved by Hyundai Motor Finance. Not all lessees will qualify. Higher lease rates apply for lessees with lower credit ratings. MSRP \$26,500 (includes destination, excludes tax, license, title, registration, documentation fees, options, insurance and the like). Actual net capitalized cost \$23,476.20. Cap cost reduction includes \$3,000 HMF Lease Cash. Net capitalized cost includes \$595 acquisition fee. Dealer contribution may vary and could affect actual lease payment. Total monthly payments \$12,400.20. Option to purchase at lease end \$14,045. Lessee is responsible for third-party fees. Third-party fees vary by state or locality. Lessee is also responsible for insurance, maintenance, repairs, \$.20 per mile over 12,000 miles/year, excess wear, and a \$400 disposition fee. Disposition fee of \$400 applies in all states except in CO, IN, IA, KS, ME, OK, SC, WI, WV, & WY, where disposition fee is subject to state law limitations. Prices plus government fees and taxes, any finance charges, any dealer document processing charge, any electronic filing charge and any emissions testing charge. No holds or deposits. All vehicles sold on a first come, first serve basis.

New 2015 Hyundai Genesis 3.8L Sedan
With MSRP of \$39,205 in stock



\$0 due at signing.
\$0 security deposit.

ALL IN STOCK \$335 PLUS TAX MO.

36 Month Lease On Approved Credit

All in stock at this MSRP. Closed end lease for 2015 Hyundai Genesis Sedan (Model # B1402R65) available from November 3, 2015 through January 17, 2016, to well-qualified lessees approved by Hyundai Motor Finance. Not all lessees will qualify. Higher lease rates apply for lessees with lower credit ratings. MSRP \$39,205 (includes destination, excludes tax, license, title, registration, documentation fees, options, insurance and the like). Actual net capitalized cost \$33,105.94. Cap cost reduction includes \$3,750 HMF Lease Cash, \$1,000 Flex Certificates, \$1500 Competitive Coupon (Receive an additional \$1,500 off a new 2015 Hyundai Genesis lease if you are the current registered owner of a qualifying conquest vehicle. Qualifying conquest vehicles: 2004 - 2015 model year Acura, Audi, BMW, Cadillac, Lincoln, Lexus, Infiniti, Mercedes Benz, Chrysler 300, Jaguar, Avalon, Buick La Crosse and Volvo. Net capitalized cost includes \$595 acquisition fee. Dealer contribution may vary and could affect actual lease payment. Total monthly payments \$13,161.24. Option to purchase at lease end \$21,562.75. Lessee is responsible for third-party fees. Third-party fees vary by state or locality. Lessee is also responsible for insurance, maintenance, repairs, \$.20 per mile over 12,000 miles/year, excess wear, and a \$400 disposition fee. Disposition fee of \$400 applies in all states except in CO, IN, IA, KS, ME, OK, SC, WI, WV, & WY, where disposition fee is subject to state law limitations. Prices plus government fees and taxes, any finance charges, any dealer document processing charge, any electronic filing charge and any emissions testing charge. No holds or deposits. All vehicles sold on a first come, first serve basis.



HYUNDAI
Certified Pre-Owned

'14 Hyundai Accent GLS Sedan	00488R/534972	\$10,477
'14 Hyundai Accent GLS Sedan	00504R/550129	\$11,310
'14 Hyundai Accent GS Hatchback	00547/58251	\$11,459
'13 Hyundai Elantra GLS Sedan	00462B/94686	\$12,108

'13 Hyundai Accent GS Hatchback	00526/08769	\$12,784
'13 Hyundai Elantra GLS Sedan	H0090R/01073	\$12,799
'13 Hyundai Accent GS Hatchback	00568/084205	\$13,082
'13 Hyundai Accent GLS Prem Pkg	00568/07774	\$13,098

'12 Hyundai Veloster Tech Pkg	00546/054482	\$13,894
'13 Hyundai Sonata GLS Sedan	00509/60894	\$14,594
'13 Hyundai Sonata Hybrid Sedan	00556/003907	\$15,892
'12 Hyundai Sonata Hybrid Sedan	00544/045809	\$15,990

NOTICE OF SECURITY: All our vehicles are equipped with a temporary anti-theft device, which is the property of the dealership and will be removed upon purchase.



HYUNDAI

NEW THINKING.
NEW POSSIBILITIES.

THEHYUNDAIGUYS

411 S. Brand Blvd., Glendale, CA 91204
(818) 723-0526 • www.hyundaiguys.com



All advertised prices exclude government fees and taxes, any finance charges, any dealer document processing charge, any electronic filing charge, any emission testing charge. Offers good through 1/17/16. Written dealer limited warranty available for review. See dealer for complete details.